



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4005

L Gurukulamayur G. we & family

bppmpt- infuy

P - 1887

2010

ԽVI

ՀՅԱՍՏԱՐՈՎՈՒԹԻՒՆ ԿԵՆԳՐՈՆԱԿՈՆ ԳՐԱԴԱՑՈՒԱԳՈՅԻ

ԸՆՏԱՆԵՎԱՆ ԱԾԽԱՐՀՔ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՏԵՂՑՈՒԹԵԱՆ

ՀԱՏՈՒԱԾՆԵՐՈՎ

325

ԵՒ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

Ա.Ա.ԶԻՒ ՏԱ.ՐՈՒ.Յ.Յ

ՈՒՍՄՈՒՆՔ ԵՒ ԸՆԹԵՐՑՄՈՒՆՔ

ԵՐԻՈՐԴԻ ՏԻՊ

Ուսումը լինի լուրջ՝ մանուկը լինի զուարժ.
Սանհավագիւնեան դադանիցն այս է:

Ես ձեր սիրով տուն, տանիք,
բարեկամներ, ընտանիք,
Յափշտակեալ կը մոռնամ
Ալիք, անդունդ, մաչ անգամ:

Ուշանեանից:

491.99-8

Մ-25

ՅՈՐԴՆԵՑ Ա. ՄԱՆԴԻՆԵԱՆ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մովսես Վարդանեանի:

1887

2002

ՀԱՏԱՆԵԿԱՆ ԱՃԽՄՌՀՔ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՏԵՂԱԼԻԹԵԱՆ

ՀԱՏՈՒԱԾՆԵՐՈՎ

491.99-8

Մ-25

Այ

ԵՒ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐՈՒԱՅ

ՈՒՍՄՈՒՆՔ ԵՒ ՀՆԹԵՐՑՄՈՒՆՔ
ԵՐՐՈՐԴ ՏԻՊ

Ուսումը լինի լուրջ՝ մանուկը լինի զուարթ.

Մանկավայրութեան դադարքին այս է:

Ես ձեր սիրով տուն, տանիք,
Բարեկամներ, ընտանիք,
Յափշտակեալ կը մոռնամ
Ալիք, անգունդ, մահ անգամ:

Ունանեանից:

ՅՈՐԻՆԵՑ Ս. ԱՌԱՋԻՆԵԱՆ



ԹԻՖԼԻՍ
Տպարան Մովսես Վարդանեանի:

1887

Ա. Ռ. Ա. Զ Ի Ն Տ Ա Ր ՈՒ Ա Յ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ *

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

I

ՆԱԽ ԱՐՁԱԿ ԵՒ ԱՊԱ ԲԱՌ ԱՌ ԲԱՌ

ՊԱՏՄԵԼՈՒ **) ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

Դ. ՃՆՃՂՈՒԿ.

Դօz. Պենզորու Տիֆ. 15 յանվար 1887 թ.

16463-58
(1093 42)

Տիպ. Մ. Վարդանյան, Տրոյն. պետ., հ. № 11.

Կտուրը ցորեն փուեցի՝ չորյնելու համար,
ծնձղուկներ եկան ժողվան՝ ուստելու համար,
Քարը վեր կալայ խփեցի՝ սպանելու համար,
Թռան գնացին բերդի տանիք՝ գաճագտելու համար,
Ղասարի դանակ ուզեցի՝ մորթելու համար,
Մեծ պղինձ ուզեցի՝ եփելու համար,
Սաղ քաղաքը մեծարեցի՝ ուստելու համար,
Երէցներ ժողվան՝ եկան օրհնելու համար,

*) Այս երկու տեսակ հատուածներից խւրաքանչիւրը տարբեր գործածութիւն ունի. տես «Բացատրութիւններ», ուսուցչի համար, մանաւանդ վեցերորդ հատուածի (Ուժով կատուի) Կարդալու Հարժուելան բացատրութիւնը:

**) Ուսման վերջը նաև կարգավոր յարմար են սոյն այս հատուածները, այդ պատճառով այս անդամ աւելի խոշոր տառերով են շարվում:

Աղջիկներ ժողվան՝ եկան բմբուլի համար,
Պառաներ ժողվան՝ եկան փետելու համար,
Քեօխվայ-գզիր տուն վազեցին՝ խորվածի համար,
Քեթխուղէք բազմեցան՝ այս գովքի համար—

Ա.՝ ճնճուղին,

Կառակը դառնին,

Ակապակ փորին,

Ո-աւէն հո-աւին,

Խըմէն զըւին,

Ա-ու-էն եղընին,

Պըսուին ճըսուին

Փախչեն երթան՝ մանգալու համար:

2. Ա.Բ.Ա.Ղ.

Կուկլուկն, սանամեր,
Էն մեկ հա. կար, մար գնաց:
—Ծարա. աղբիւր կուլ գնաց:
Խնչ կար կտուց:—Զիր ու ջամփ:
Ո՞ւր իր տանում:—Հարս ու փեսփն:
Հարսն մար է նստել:—Ռոկէ քախտին:
Հարսն ինչ է եփում:—Կարկոտ:
Ո՞վ է բերել:—Պստի լակոտ:
Ո՞վ ապսպրել:—Քաշալ Ա-կոբ,
Ո՞վ է հարել:—Աղա Սօլքան:
Ո՞ւր է դրել:—Բաց պատուհան:
Ո՞վէ կերել:—Կարայ փըշիկ:
Վայ կարայ փըշիկ, վայ կարայ փըշիկ.
Քո մերն ուտի քո քըշիկ:

Յ. Ա.Բ.Գ.Ա.Կ.

<p>Արեգակ, արեգակ, գուրս արի, Հերն ու մերդ եկել են, Ոսկէ բլիթ բերել են, Պատի ծակը կոխել են.</p>	<p>Մուկն եկել է, տարել է, Կատուն յետնէն վազել է, Գոմշի ոտը կոտրել է, Աղամանը վիթել է:</p>
-------------------------------------------------------------------------------------------------------------	-------------------------------------------------------------------------------------------------------

4. Ա.Ռ.Ա.Ի.Օ.Տ.

<p>Լո-սայտո-, լո-սայտո-, Լո-սո-է բարին, Ծիրն է ծառին,</p>	<p>Հո-սո-է ըլոտին. Աշխատասո-ը, վըր իսց բանի, Ծոյլ ճաշդո-ու-նը ոտանի:</p>
-------------------------------------------------------------------	----------------------------------------------------------------------------------

Երին+ի դունէրը բաց էր.
Ոսկէ անուուր դրած էր,
Քիշապար զիւն նասած էր,
Լո-սո-ուիւը իսուգնած էր,
Մէծ ու ուստի չորս-մ էին,
Արդարները խաղում էին,
Մէղաս-ուրները լոյիս էին:

5. Ք.Ո.Յ.Ր ՈՒ ԵՂԲԱՅ.Ր.

Ելնեմ ծառը զարդարեմ,
Վէր գամ տակը մինդարեմ,
Հակի վառիկը մորթեմ,
Տանեմ գետը՝ յուանամ,
Եփեմ ու չորանին տամ,
Չորանն ինձ մէկ ոչխար տայ,
Ոչխարըն Աստծուն տամ,
Աստուած ինձ մէկ եղբայր տայ:

Եղբայր, Եղբայր, ջան Եղբայր,
Զանը քեզ մատաղ, Եղբայր.
Կարայ եմ կարել, կարճ է եկել,
Բուզմայ եմ շարել, խոչ է եկել.
Ճնճուղի լեզուն մեղրով
Քեզ համար եմ տապակել:

6. ՈՒԺՈՎ ԿԱՏՈՒ.

Եղել է մէկ տըմիուան շուն, գնաց մուաւ բաղերի մէջ.
Բաղը կոտրեց նորա ոտը. շունը հարցրեց՝
Ասաց—տօ, բաղ, դու շատ ուժով ես:
Ասաց—հու, ես որ ուժով լինէի, արեգակն ինձ չէր այրի:
Գնաց արեգակի մօտ՝ ասաց—տօ, արեգակ, դու շատ
ուժով ես:
Ասաց—հու, ես որ ուժով լինէի, ամսն իմ դէմս չէր
բռնի:
Գնաց ամսի մօտ՝ ասաց—տօ, ամս, դու շատ ուժով ես:
Ասաց—հու, ես որ ուժով լինէի, անձրեւն ինձնից չէր կաթի:
Գնաց անձրեւի մօտ՝ ասաց—տօ, անձրեւ, դու շատ ուժով ես:
Ասաց—հու, ես որ ուժով լինէի, խոտն ինձնից չէր բռնի:
Գնաց խոտի մօտ՝ ասաց—տօ, խոտ, դու շատ ուժով ես:
Ասաց—հու, ես որ ուժով լինէի, գառն ինձ չէր ուտի:
Գնաց գառան մօտ՝ ասաց—տօ, գառ, դու շատ ուժով ես:
Ասաց—հու, ես որ ուժով լինէի, գայլն ինձ չէր ուտի:
Գնաց գայլի մօտ՝ ասաց—տօ, գայլ, դու շատ ուժով ես:
Ասաց—հու, ես որ ուժով լինէի, շունն ինձ չէր խեղդի:
Գնաց շամ մօտ՝ ասաց—տօ, շուն, դու շատ ուժով ես:
Ասաց—հու, ես որ ուժով լինէի, պառաւն ինձ չէր ջարդի:
Գնաց պառաւի մօտ՝ ասաց—քա, պառաւ, դու շատ ուժով ես:
Ասաց—հու, ես որ ուժով լինէի, մուկն իմ հացը չէր կրծի:

Գնաց մկան մօտ՝ ասաց—քա, մուկ, դու շատ ուժով ես:
Ասաց—հու, ես որ ուժով լինէի, կատուն ինձ չէր ուտի:
Գնաց կատուի մօտ՝ ասաց—քա, կատու, դու շատ ուժով ես:
Ասաց—հու, ես ուժով եմ, որ ուժով եմ.

Մանրիկ, սպիտակ ատամ ունիմ,
Սուր սուր զայլմ ճանկեր ունիմ,
Սամուր քիւզքէ մուշտակ ունիմ,
Աղէքտեկաց մուշտակն եմ,
Խաթիւնտեկաց շուշտակն եմ:
Ամառ պառկած ծալքի գլխին,
Չմեռ քնած թոնրի կշտին—
Մեառւ, մեառւ, մըլաւան եմ,
Մկներտեկաց հոգեհան եմ:

7. Ա.Ի.Գ ՄԿԱՒԿ.

Աւագ մկնիկ խաթունը լազարը քաշեց գլխին եւ գնաց.
Հովնակ գուրս եկաւ նորա առաջ եւ ասաց. «Խէր ըլի, աւագ
մկնիկ, այդպէս շտապով ուր ես գնում»:
—Խէր բարին վրէդ ըլի, գնում եմ մարդ ճարելու:
Գնաց, Աստուած յաջողի»:
Գնաց, գնաց, առաջն եկաւ բեր-ունիւր եւ ասաց. «Խէր
ըլի, աւագ մկնիկ, այդպէս շտապով ուր ես գնում»:
—Խէր բարին վրէդ ըլի, գնում եմ մարդ ճարելու:
«Գնաց, Աստուած յաջողի»:
Գնաց, գնաց, ծովն եկաւ առաջը եւ ասաց. «Խէր ըլի,
աւագ մկնիկ, այդպէս շտապով ուր ես գնում»:
—Խէր բարին վրէդ ըլի, գնում եմ մարդ ճարելու:
«Գնաց, Աստուած յաջողի»:
Գնաց, գնաց, ահագին սար եկաւ առաջն ու ասաց. «Խէր

ըի, աւագ մկնիկ, այդպէս շտապով ուր ես գնում»:
 — Խէր բարին փրէդ ըլի, գնում եմ մարդ ճարելու:
 «Գնա՛, Աստուած յաջողի».
 Գրաց, գնաց, մէկ չնարի ծառ եկաւ առաջն ու ասաց.
 «Խէր ըլի, աւագ մկնիկ, այդպէս շտապով ուր ես գնում»:
 — Խէր բարին փրէդ ըլի, գնում եմ մարդ ճարելու:
 «Գնա՛, Աստուած յաջողի»:
 Գնաց, գնաց, հայունէ կրկալով առաջն եկաւ եւ ասաց. «Խէր ըլի, աւագ մկնիկ, այդպէս շտապով ուր ես գնում»:
 — Խէր բարին փրէդ ըլի, գնում եմ մարդ ճարելու:
 «Գնա՛, Աստուած յաջողի»:
 Գնաց, գնաց, թագաւորի սուրայր թռաւ եկաւ առաջը եւ ասաց. «Խէր ըլի, աւագ մկնիկ, այդպէս շտապով ուր ես գնում»:
 — Խէր բարին փրէդ ըլի, գնում եմ մարդ ճարելու:
 «Արի ինձ առ»,
 — Ինձ ինչո՞վ կըպահես:
 «Կտուցով»:
 Մէկմէկու հաւանեցին, գնացին եօթը օր, եօթը գիշեր
 հարսանիք արեցին, պասկուցան:

Հարսանիքից պրծան. աքլարը գնաց քճէճ անելով դառում ճարելու. աւագ մկնիկն էլ մտաւ թոնիր, որ վառի:
 Թոնրի կրակը կսպաւ, աւագ մկնիկը մնաց թոնրի մէջ, եղաւ ճժտիկ-վժտիկ:

Աքլարը երեկոյեան տուն եկաւ, տեսաւ որ աւագ մկնիկն ընկել է թոնիրը, եղել է ճժտիկ-վժտիկ. գնաց կատարը կտրեց, կրամոխիր թափեց գլխին ու նստեց:

Կայստղակն եկաւ, տեսաւ, ասաց. «Ա՛քլարիկ, դու ինչո՞ւ ես կատարկտրիկ, մոխրաչափիկ»:

— Օ՛չ, աքլարիկ կատարկտրիկ, մոխրաչափիկ. աւագ մկնիկն ընկաւ թոնիր, եղաւ ճժտիկ-վժտիկ:

Կաչաղակի փետուրները թափուեցան, գնաց նստեց ծառի վրէն:

Ծառէին ասաց. «Կաչաղակիկ, դու ինչո՞ւ ես թեւաթափիկ»:
 — Օ՛չ, կաչաղակիկ թեւաթափիկ, աքլարիկ կատարկտրիկ, մոխրաչափիկ. աւագ մկնիկն ընկել է թոնիր, եղել է ճժտիկ-վժտիկ:

Ծառը կոտրուեցաւ, ընկաւ քարի վերայ:

Քարն ասաց, «Ծառիկ, դու ինչո՞ւ ես ճղակոտոր»:
 — Օ՛չ, ծառիկ ճղակոտոր, կաչաղակիկ թեւաթափիկ, աքլարիկ կատարկտրիկ, մոխրաչափիկ. աւագ մկնիկն ընկել է թոնիր, եղել է ճժտիկ-վժտիկ:

Քարը գլորուեց, գնաց ծովը:

Ծառն ասաց. «Քարիկ, դու ինչո՞ւ ես գլոր-մլոր»:
 — Օ՛չ, քարիկ գլոր-մլոր. ծառիկ ճղակոտոր, կաչաղակիկ թեւաթափիկ. աքլարիկ կատարկտրիկ, մոխրաչափիկ. աւագ մկնիկն ընկել է թոնիր, եղել է ճժտիկ-վժտիկ:

Ծովն էլ մէկնմէկ բրորաւ:

Բեր-սրէն ասաց. «Ծովիկ, դու ինչո՞ւ ես բրոր-մլոր»:
 — Օ՛չ, ծովիկ բրոր-մլոր, քարիկ գլոր-մլոր, ծառիկ ճղակոտոր, կաչաղակիկ թեւաթափիկ, աքլարիկ կատարկտրիկ, մոխրաչափիկ. աւագ մկնիկն ընկել է թոնիր, եղել ճժտիկ-վժտիկ:
 Բերորիկը կթոցը շրջեց եւ գնաց:

Հովհան իրան դէմ ելաւ եւ ասաց. «Բերորիկ, դու ինչո՞ւ ես կթոց շրջիկ»:

Օ՛չ, բերորիկ կթոց շրջիկ, ծովիկ բրոր-մլոր, քարիկ գլոր-մլոր, ծառիկ ճղակոտոր, կաչաղակիկ թեւաթափիկ, աքլարիկ կատարկտրիկ, մոխրաչափիկ. աւագ մկնիկն ընկել է թոնիր, եղել է ճժտիկ-վժտիկ:

Հովիւն այս որ լեց, ոչսարներին անտէր թողեց գնաց. մաքին մկանով ետեւն ընկաւ, միսիթարեց, գարձրեց բերեց, եօթն անդամ պտըտեց ոչսարների բոլորը եւ ասաց.

«Աւագ մկան կողի վերայ,
«Աւագ մկան կողի վերայ,
«Աւագ մկան կողի վերայ:

8. ՄԱՐԴ ՈՒ ԿՆԿԱՅ ՍԵՐԸ.

- Երես. Քա կնիկ, արի անենք բարակ բովիկ, տանք առնենք
Հինգ վեց էծիկ, երկու կովիկ:
Կանչ. Դու կ'անես բարակ բովիկ, կուտաս կ'առնես հինգ վեց
Էծիկ, երկու կովիկ: Ես էլ կ'երթամ մածուն մերեմ, սերն
Էլ վրան:
Երես. Դու կ'երթաս մածուն մերես, սերն էլ վրան: Ես կը-
դառնամ բռան կատու, կու գամ կ'ուտեմ:
Կանչ. Դու կըդառնաս բռան կատու, կու գաս կ'ուտես: Ես
կըդառնամ կաղնի կոմքալ, որ քո կողքիդ կոտրտում:
Երես. Դու կըդառնաս կաղնի կոմքալ, որ իմ կողքիս կոտր-
տուես: Ես կըդառնամ ճութ-ճութ խաղող թփից կախած:
Կանչ. Դու կըդառնաս ճութ-ճութ խաղող թփից կախած: Ես
կըդառնամ սուր-սուր գանակ, գամ քեզ կտրեմ:
Երես. Դու կըդառնաս սուր-սուր գանակ, գաս ինձ կտրես:
Ես կըդառնամ կարմիր գինի, լցուեմ կարաս:
Կանչ. Դու կըդառնաս կարմիր գինի, լցուես կարաս: Ես կը-
դառնամ Սարխօշ Մայրօ, գամ քեզ խմեմ:
Երես. Դու կըդառնաս Սարխօշ Մայրօ, գաս ինձ խմես: Ես
կըդառնամ թեժ թունդ քացախ, քեզ ճաքացնեմ:

9. ԾԵԾՈՒԱԾ ԳԱՐՆԻԿ.

«Ինչն կույաս դուն, գառնիկ:
— Խիստ ծեծ կերպ ես, մարիկ:
«Ո՞վ ծեծեց քեզ, իմ գառնիկ:
— Մեկ ծեր պառա, փիս կնիկ:

«Ինչն ծեծեց քեզ, գառնիկ:
— Ծառի տակն իի, մարիկ:
«Ինչն ծեծեց քեզ, գառնիկ:
— Մեկ միպատով, իմ մարիկ:
«Ո՞ր տեղի խփեց քեզ, գառնիկ:
— Ոտիկներիս, իմ մարիկ:
«Ի՞նչպէս յացիր դուն, գառնիկ:
Մէ, մէ, մէ, մէ, իմ մարիկ:

10. ԱՂՋԻԿՍԻ ԹԻՔԵՆ.

Մէ՛ զառ հառ կոշ, վեպն երկեն էր,
Հետը յագեւ ուսուու-մէկ էր:
Աղու-էան հեւաս-էց մէշըւու-մ էր:
Աղու-էան սասաց «Ճեղ» նէպ է,
Հառ-էան վաս-էկ էոյէս ուն է:
Աղու-էան փորսոն սատիստիներով
Անցա- աղաս-էց սովնէ սատինէ:
Պուլ ունի-ց բեմ սասացընի,
Մնաց սպաս-ց առըստոնինէ:
Աղու-էան էկու սատինի-մատինէ,
Քանց հէր կասու-ն կանափոնի,
Վաս-իըները արէց խորտի...
«Լաս- նիտոյ է», օրհնէալ քա- ին»:

11. ՄՈՒԹ:

Մէկ պստիկ մարդ կար քիար,
Անապատի մէջ ճգնում էր,
Օր՝ կորեկի մի կուտ կ'ուտէր,
Կէսն աղքատի բաժին կ'անէր.
Տկլոր մէջքով հող էր կրում,
Բողիկ ոսով փուշ էր քաղում,

Եկեղեցու պատն էր շարում,
Խնդն էր գրում, ինքն էր կարդում;
Չում իրիկուն աղօթք անում:

* *

Օրն էր շաբաթ լոյս կիրակին՝
Պատարագի պակսեց բաժկին:

* *

«Մինչեւ քաղաք մէկ գնացի,
Գլուխը դըրի քիչ քուն արի.
Ոտնակոռը մոլորուեցայ՝
Քաղցր աղբիւրին ըռաստ եկայ:
Երեք հատ գող իմ գէմն ելան,
Մէկն ասաց—խիենք կորցնենք.
Մէկն ասաց—ճամփից հանենք.
Մէկն ասաց—ոչ խիենք կորցնենք,
Ոչ ճամփից հանենք.

Սշխարհքի մեղքը

Վրէն շալկենք—տանի:

Մէկ կտոր տեղ ես գնացի՝

Սաղմոսարանս գլորեցի.

Մէկ կտոր էլ տեղ գնացի՝

Սւետարանըս խորեցի.

Մէկ կտոր էլ որ գնացի՝

Ժամագիրքս թաղեցի:

Կարձ ասեմ, այնքան գնացի՝

Մինչ «մեղասծուն» էլ մոռացի:

Տէր, Դու գիտես, կամքդ Քոնն է.

Ես Քո ստեղծած, Դու իմ Աստուած:

12. ԱՆԻԵԼՔ ՄԱՐԴԻ¹⁾.

Եղել է մէկ մարդ շատ հարուստ, ունեսոր. ծուռ-մուռ
ապրելով, ինչ ունէր չունէր կերաւ, նստեց գատարկ: Հաց-
մաց կտրուեցաւ. մէկ ձեռքը դրեց ծոցը, մէկ ձեռքը երեսին,
չէր իմանում ինչ անէ: Ախ վախ անելով՝ հայվում մաշվում էր:
Բարեկամներն եկան * գլխին հաւաքուեցան, եւ նոցանից
ծերը առաւ ու ասաց. «Դու մէկ մեղք ես գործել, քո գան-
ձանակը քեզանից * խրտնել վախել է. վեր կաց * գնա քո
գանձանակի ետեւ, գուցէ էլլի * գտնես եւ առաջուայ պէս
բախտաւորուես»:

Մարդը * գլխի ընկաւ. վեր կացաւ սար ու քար ընկաւ,
գիշեր ցերեկ իւր գանձանակը * վնսուեց: Մէկ գիշեր երա-
զում տեսաւ, որ իւր գանձանակը * բարձր սարի վերայ * գը-
լուխը * ծուած * նստած է եւ նա էլ ախ ու վախ է անում:
* Առաւօտեան զարթնելիս այն սարի ճանապարհը բռնեց:

* Գնաց ճանապարհին մի առիւծ տեսաւ * նստած: Առիւ-
ծը մարդուն կանչեց հարցրեց. «Ո՞ւր ես գնում»: Մարդն ա-
սաց. «Գնում եմ * գանձանակս գլուխնեմ»: Առիւծն ասաց. «Ես
գիտեմ, որ քո * գանձանակդ շատ գիտուն է. նորանից հար-
ցրու տես, թէ ես ինչով կրաւանամ, ահա եօթը տարի է
հիւանդ եմ. դառնալուդ արի ինձ պատմիր, ես էլ իմ ձեռ-
քից եկած լաւութիւնը կ'անեմ»: Մարդը խօսք տուեց, գնաց:

Նատ գնաց, քիչ գնաց, տեսաւ մէկ այգի, որ հազար *
նմուշ * պտղով * լցուկ էր. քանի քաղեց որ ուտի, տեսաւ
որ լեղի են: Այգու տէրը * նշմարեց, այս մարդու վերայ բար-

¹⁾ Մինչև այստեղ պատմութեան և ընթերցանութեան հա-
տուածներն իրարից բաժանուած էին. այսուհետև նոյն այս պատ-
մութիւններն էլ պիտի կարդացուին: Կարդալու ժամանակ աստղա-
նիշ բառերի վերայ մանուկներն առանձին ուշադրութիւն պէտք է
դարձնեն:

կացաւ, յետոյ հարցրեց. «Ո՞ւր ես գնում»: Մարդն իւր դարդը պատմեց այգու տիրոջ: «Թէ, թէ որ այդպէս է, քո գանձանակից հարցրու, իմ այգու դարմանն ի՞նչ է, որ ինչ անեմ չ'արեմ, պտուղները դառն են * բհամ գալիս: Պատրուս արեցի՝ չելաւ. նոր ծառ * տնկեցի՝ չ'ելաւ: Երբ դառնաս, պատասխան բեր ինձ, իմ ձեռքից էլ ինչ լաւութիւն գայ, կ'անեմ քեզ»: Մարդը խօսք տուեց, գնաց:

Գնաց, գնաց, հասաւ մէկ շէն-շքեղ բերդ. մտաւ մէջը, տեսաւ որ մէկ ջահիլ աղջիկ պալատի մէջ ման է գալիս: Նա այս մարդուն հարցրեց. «Ե՛զբայր, դու այստեղ ի՞նչ բան ունիս»: Մարդն իւր գլխի եկածը պատմեց:

Աղջիկը դարձաւ ասաց նորան. «Ես շատ գանձ * հարրստութիւն ունիմ, շատ մալ ու ապրանք. բայց մի ցաւ ունիմ, որ գիշեր ցերեկ վիշտ է սրտիս: Թէ որ քո գանձանակից ինձ համար մի ճար հարցնես, ամենայն տեսակ բարութիւն կը տամ քեզ»: Մարդը խօսք տուեց, գնաց:

Գնաց, գնաց, ահա տեսաւ, որ իւր գանձանակը սարի * գլխին նոտել է: Բարեւ * տուեց, * նոտեց. շատ գանգատ արեց, վերջը * ապապրած բաների ճարը հարցրեց, ամենի պատասխանն առաւ:

«Թէ, հմիմ վեր կաց, գնանք», ասաց:

— Դու առաջ գնա, ես էլ կրգամ, ասաց գանձանակը:

Մարդը դարձաւ, առաջ այն * աղջկան տեսաւ, ասաց. «Քո գեղն այն է, որ դու մէկ կտրիչին ամուսնանաս, քո վիշտն ու ցաւը կ'անցնի»:

Եկաւ այդին, տիրոջ կանչեց, ասաց. «Քո այգու ջուրը որ առուից որ գալիս է, այն առուի մէջ ոսկու հանք կայ, ոսկու փշանքը * ջրի հետ գալիս է, ծառերը * ծծում են, դառնանում են. կամ * ջրի առուն փոխիր, կամ հանքը փորիր եւ դուա հանիր, * պտուղները կ'անուշանան»:

Եկաւ առիւծի մօտ, * նոտեց մարդը, պատմեց իւր գան-

ձանակի տեսնելը, այգու տիրոջ ու աղջկայ բաները: Առիւծը հարցրեց. Աղջիկը քեզ լաւութիւն չ'արեց»: Մարդն ասաց. «Ի՞նչպէս չէ, ասաց. «Արի դու ինձ առ, * նատենք մէկ տեղ Աստծու բարութիւնը վայելենք. ես համաձայն չ'եղայ»:

Առիւծը հարցրեց. «Այգու տէրն ի՞նչ լաւութիւն արեց»: Մարդն ասաց. «Այգու տէրը ոսկու հանքերը հանեց, կօլոլ ոսկի գառան, ինձ տուեց: Ես չ'առայ, ասացի՝ Ո՞վ այդքան բան կրաշկէ եւ տուն կրտամի»:

Ե՛, ասաց առիւծը, ի՞նձ համար ինչ զեղ ասաց»: Մարդը պատասխանեց. «Քեզ համար էլ ասաց, որ եթէ մէկ ամսենքը մարդու գլուխն ուտես, կրյաւանաս»:

Առիւծը սորա ասածները օրինաւոր կերպով վեր դիր արեց. թաթը պարզեց, մարդու * գլուխը * բռնեց, գետնով տուեց, * փշրեց կերաւ: Ասաց. «Ես իմ Աստուած, քեզանից էլ անիսելք մարդ այս աշխարհում չեմ գտնիլ»:

13. ՆԱՀԱՊԵՏԵՆՑ ԱՂՋԻԿԸ.

Ժամանակով նահապետենց Բաղիկ կար, շատ հարուստ էր: Միտք արեց Երուսաղէմ գնալ: Իւր * տղի, իւր * կնկայ հետ ճանապարհ ընկաւ: Սոքա ունէին մէկ * աննման աղջիկ, հասած աղջիկ, կոյս աղջիկ: Այդ աղջիկը պահ տուին գիւղի ուսի տանը:

Թէսի միտքը փոխուեցաւ, ուզեց աղջկան իւր կին շինել. շատ աշխատեցաւ՝ ըլկարողացաւ * աղջկայ սիրտն առնել. պառաների ջագերով էլ ըլկարողացաւ: Աղջիկը երբ որ շատ նեղն ընկաւ, խօսք տուեց եւ ասաց ուեսին. «Թէ որ այդպէս է, արի առաջ գլուխու լուանամ, որ մաքրուիս»: Սապոնը լաւ * փրփրացրեց, քիթ, բերան, աջք, երես * փրփուրով * լըցրեց. ուզածիդ պէս քօթկեց ուեսին, ջարդեց թեւ թիկոնքը, * գլուխու * մլուխը, թողեց գնաց:

Ուէսը սապոնի * մրմուռից չըկարողացաւ աչքերը բանալ. կատաղութիմից արիմը գլուխն ընկաւ, խելքը գնաց, մինչեւ որ հան-հուն խելք գլուխ ժողովեց, վեր կացաւ * լուացուեցաւ, սրբուեցաւ: Տեսաւ, թէ ինչպէս խազք խայտառակ եղաւ, ասաց. * «Համ կամքս չկատարուեցաւ, համ աշխարհքի ծաղր ու ծանակ դառայ՝ գիւղի մեծ ու * պատկի առաջ, ի՞նչ անեմ»: Վեր կացաւ * աղջկայ հօրը գիր * գրեց, թէ՝ Դուք ձեր աղջիկը ինձ պահ տուիք, ամա ձեր աղջիկը փախաւ. Երես բաց հարիւր մարդու տուն գնում գալիս է:—Աղջկայ հայրն ու մայրը գիր որ առան, ուխտ-մուխտ հարամ դառաւ իրանց * գլխին. վեր կացան դարձան տուն գալու: Հայրը շատ բարկացաւ, ասաց գնամսպանեմ* աղջկաս, որ ինձ անպատիւ արեց:

Աղջիկը գիտէր, որ հայրը շատ կատարած է, փախեցաւ, տուն չեկաւ: Վեր առաւ իւր աղջուխը, հաւի արեան մէջ թաթիւեց, հոլովին * տուեց, ասաց. «Տար * հօրս տուր, ասա աղջիկդ քեզ համար մեռել է»: Ինքը գնաց կորչելու: Գնաց, գնաց, անտառի մէջ մոլորուեցաւ. տեսաւ * ջրի աւագան, աւազանի մօտ չինարի ծառ. եւստ չինարի ծառի գլուխը * նստեց: Նատ մնաց, քիչ մնաց, Ոստանայ թագաւորի որդին եկաւ որս, իջաւ աւազանի մօտ: Արեգակը չինարի ծառի շուքը * խիել էր աւազանի մէջ, շուքի միջից էլ մէկ մարդու շուք էր երեսում: Թագաւորի որդին վերեւ նայեց, տեսաւ, որ մէկը * ճղների մէջ պահուել է: Ասաց. «Ի՞ն ես, ջի՞ն ես, աղամորդի՞ ես. ցած կուգաս՝ արի, թէ չէ՝ մէկ նետուանեղով ցած կըբերեմ քեզ»: Աղջիկն ասաց. «Ես ոչ ին եմ, ոչ ջին: Ես էլ քեզ պէս աղամորդի եմ: Ես կ'իջնեմ, ամա * տկլոր եմ, կոյս աղջիկ եմ, քո կաբէն դիր այդտեղ, գու քաշուիր այն կողմը, ես գամ հագնեմ»:

Աղջիկն իջաւ, հագաւ կաբէն: Թագաւորի * տղէն եկաւ տեսաւ, որ մի մարալ աղջիկ է, որ չ'ուտես * չըխմես, միայն երեսը նայես: «Էլ ի՞նչ որս անեմ: գու եղիր իմ հարս»: Աղ-

ջրկան ձի նստեցրեց, տարաւ տուն, թագաւորին ասաց. «Հայր, իմ ուղածը իմ բերած աղջիկն է»: Հայր մայր ասացին. «ՈՌԴի, ով գիտէ այն ինչ ջինս է, անտառի մէջ * գտած աղջիկը մարդուց է, գիւտական է, ի՞նչ է»:

—Զէ, ասաց, * տղան, ես նորան պէտք է առնեմ:

«Քո մուրը՝ քո ճակատին», ասացին: Աղջկան նշանեցին, * պսակեցին. մէկ տարուց յետոյ Սաստուած զաւակ տուեց նուցա: Մինչեւ այս օր հարսը վեսի հետ չէր խօսել: Մէկ օր հարսը իւր * տղին օրօրոց * գրեց, մէկ ձեռքով օրօրեց, մէկ բերան գովիճն ասաց, մէկ բերան էլ լաց եղաւ: Փեսան այդ ժամանակ հասաւ, ասաց. «Կնիկ, ինչի՞ ես լաց լինում, գարդող ի՞նչ է»:

—Ա՞յս, ասաց, իսկի չես ասում ես էլ հայր ունիմ; մայր ունիմ; ջիգար ունիմ; կարօտել եմ: Խո ես քարից չեմ ծնուել, ծառի * վրէն չեմ բուսել: Ի՞նչ կ'ըլինի, թողնես երթամ * հօրս * մօրս տեսնեմ, գառնամ:

Թագաւորի տղէն կամչեց իւր վեզիրին, սայլեր սարքել տուեց, հարիւր ջան էլ զօրք: Վեզիրին ասաց. «Քո խաթունիդ տար հօրանց տուն, գու դարձիր»:

Գնացին մէկ օրտայ ճանապարհ. իջան հաց կերան, ամէն մարդ գնաց * հանգստանալու. վեզիրը չի քնում: Դու մի ասա խաթունի երեխին ուղում է գողանալ, իւր երեխին տեղը դնել: Գնաց կամաց խաթունի երեխին * փախցրեց, տեղն ուրիշ դրեց: Վեզիրը տարաւ խաթունի երեխին մորթեց: Խաթունը մի երեխի ձայն իմացաւ, ասաց. «Այս իմ երեխի ձայնն է, բայց պառկածն ով է»: Նայեց, ճանաչեց, որ փոխել են: Վեզիրը հեռուից գալիս էր թուրը սրբելով: Խաթունն իմացաւ, որ մորթողը նա է: Փախաւ անտառը, հասաւ մէկ * հոլովի ասաց. «Հովիւ, հովիւ, իմ հալաւը տամ քեզ, քո հալաւը ինձ տուր»:—Աչքիս վերան, ասաց ու փոխե-

ցին: Մի քօլօղ էլ * գլխին հագաւ, մազերը * կտրտեց, գնաց իւր հօր տունը:

Բազիկը * դրան * կշտին * նստած էր, չիրուխ էր քաշում: Գնաց ձեռքը պաշեց, բարեւ տուեց, բարեւ առաւ: Դարձաւ Բազիկը հարցրեց. «Քօլօղով տղայ, որտեղից ես գալիս, ի՞նչ կ'ուղես»:

Ասաց. «Ա'զա, լսել եմ շատ * մշակներ ունիս. ինձ էլ բռնէ, մի բանի դիր. հացըերան կ'աշխատեմ»:

— Գնաց, ասաց, մեր հաւերն արածացրու:

Դոքա մնան այդտեղ, մենք դառնանք վեզիրին:

Վեզիրը ետ դարձաւ, թագաւորի տղին այս պատմեց.

«Քո կնիկը քո զաւակիդ սպանեց, գիշերանց թողեց փախաւ»,

Թագաւորի որդին առաւ վեզիրին, շատ զօրք ու գնաց փնտուելու: Գնացին իջան բազկանց տունը, հարց ու փորձ արեցին, ոչինչ չ'իմացան: Իրինսահաց կերան: Թագաւորի որդին ասաց. «Նեքիաթ ասող չ'ունիք, ականջ անենք»: Ձանն ընկաւ հաւարածի ականջը. «Ես կ'ասեմ հեքիաթ»: Բազիկն ասաց. ամօթ է, այն կեզտոտ տղին մի հանէք թագաւորի որդու առաջ»: Թագաւորի որդին իմացաւ, ասաց. «Թողէք, գայ, բան ըլպայ»: Քօլօղով տղէն եկաւ, * նստեց» ասաց. «Ես հեքիաթ կ'ասեմ, ամա գիւղի ուշն ու վեզիրը պէտք է գան այստեղ նստեն. * դռները պէտք է փակեմ, մարդ գուրս ցըգնայ, մինչեւ ասեմ պրծնեմ»: Կամչեցին, վեզիրն ու ուշը եկան. դռները փակեց, բերանը բայ արաւ. իւր գլխով անցածները հեքիաթ էր շինել ու պատմեց: Երբ որ խօսքը ուշի վերայ եկաւ, ուշի փորի ցաւը * բռնեց. ինչ արին, * դռները բաց չ'արաւ, մինչեւ իւր հեքիաթն աւարտեց: Դարձաւ ասաց. «Դու իմ հայրն ես, սա էրիկս է, գա այն սատանայ ուշն է, սա էլ սատանի քեռի վեզիրն է, ես էլ ես եմ»:

Իսկոյն վեզիրի վիզը * թուցրեցին, ուշի փորը թափեցին: Հայրն ու աղջիկը, էրիկն ու կնիկը մէկմէկու վերայ ուրախացան:

14. ԳԱԶԱՆՆԵՐԻ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԻՒՆ.

Մէկ իշխանի տղան ուղեց թագաւորի աղջիկ՝ ըլտուեցին: Նա քաղաքից ու * մնից հրաժարուեցաւ, գնաց հեռու անտառի մէջ բնակելու, եւ ապրում էր ամենայն օր որս անելով:

Մէկ օր սովորութիւնից դուրս երկու որս * բռնեց. դառնալու ժամանակ տեսաւ, որ իւր բնակարանի մօտ մէկ աղուէս է * նստած. նա խօսյն վաղեց, մարդու ձեռքից որսերն առաւ, * շնորհովլ մաքրեց, պատրաստեց. մէկը բերեց մարդուն, միւսն ինքը ճաշակեց:

Միւս օրը դարձեալ որսի գնաց, եւ երեք որս որսաց: Մտքումն ասաց: «Երեւի այսօր էլ նոր հիւր ունիմ»: Եկաւ տեսաւ ահազին արջ է նստել աղուէսի * կշտին: Աղուէսը վաղեց, առաւ որսերը պատրաստեց. եւ մէկ մասն էլ արջին համեցէք արեց:

Մէկ էլ օրը չորս որս որսաց եւ գառնալիս տեսաւ, որ մի գայլ բազմել է արջի մօտ: Աղուէսն իւր պաշտօնը կատարեց:

Առաւոտը՝ հինգ որս որսաց. դարձաւ տեսաւ ահազին առիւծ փառաւոր բազմած: Աղուէսն իւր բանը շինեց:

Այնպէս շարունակ աւելացան գաղանների մէջ մէկ մեծ թռչուն՝ Անկա Զմրութ անունով՝ եւ մէկ էլ կատունների թագաւոր փագըր: Աղուէսը ծառայի պէս իւր գործը կատարումէր:

Իշխանի որդին զարմանում եւ սարսափում էր. գաղանների զանազանութիւնից ահուգողի մէջ էր ընկնում: Նոցա խաղաղ ընկերութիւնից հիանում էր: Բայց էլ ի՞նչ էր ուզում: ահա * պանչելի գերասատան իւր համար, ընտանիք, բարեկամներ, ընկերներ: Մարդն այսպէս ապրել շարունակեց, եւ օրէցօր չաւելի * հանգստանում էր:

Որսորդն էլի որսի գնաց: Աղուէսը բողոք գաղաններին

կանչեց ատեամ կազմելու եւ խորհուրդ անելու։ Գնացին բաց հրապարակ տեղ. աղուէսը մի հաստաբուն կազմի կոճ * գտաւ եւ ելաւ վրէն։ Պարոն աղուէսը իւր գահի վերայ նստած՝ խրատ կարդաց նոցա, թէ իշխանի տղէն որքան բարութիւն է անում իրանց։ «Եկէք, ասաց, այսուհետեւ նա մեր Տէ՛ր լինի, ծառայենք նորան * սրտով, * մոքով, հաւատարմութեամբ։ Գազանները իրանց մէկ թաթիկը բարձրացրին, թըռչումն իւր մէկ թեւը բաց արաւ, թէ լաւ՝ այդպէս լինի։

Մեր տէրը, ասաց աղուէսը, մարդ է եւ իշխանի որդի է, նորան հարկաւոր է մէկ պատուական * վրան կարդ ու սարքով, ո՞վ կրթերէ այս բաները»։

Ամէնքն ասացին, թէ Սնկա Զմրութը թող բերէ, մենք ուրիշ բանի պէտք կըանք։ Նա յանձն առաւ, գնաց ու բերեց իւր թեւերով ամենայն բայն։ Աղուէսը վրանը կանգնեցնել տուեց, անկողին, կահ-կարասիք զարդարեց, ուտելու խմելու բաներ պատրաստեց։

Իրիկունը տէրը դարձաւ, ամէնքը դիմաւորեցին, փառաւոր կերպով տուն բերեցին։ Աղուէսը՝ որսերը մաքրեց, մէկ մասը պղնձի մէջ եփեց որսորդի համար, * շնորհքով սեղան շինեց, տէրը գոհութեամբ կերաւ, սիրտն էլ դողում էր։ Գազաններն էլ իրանց բաժինը լափեցին։

Միւս առաւօտ աղուէսն էլի տուտը շարժելով գահը բարձրացաւ, ատենականները ժողովուեցան։

Դիտէք, ասաց աղուէսը, պապերից մենք ի՞նչ ենք լսել։ Աղամը բոլոր կենդանիները զոյգ-զոյգ տեսաւ, Աստծուն գանգատեց, որ ինքը միայն մէնակ է, Աստուած էլ նւա տուեց նորան։ Էհ, Աստուած չի հաւանի, որ մեր տէրը մէնակ է ասպրում։ Մեր տիրոջ կնիկ է հարկաւոր, այն կնիկը թագաւորի աղջիկ պէտք է լինի։ Դէ, բերէք այդ կնիկը»։

Մտածեցին. — Մեր խօսքը մէկ՝, բայց չեն թողնի գա-

զաններին, որ պալատի պարտիզին մօտենան։ — Էլի Սնկա Զմրութից ինդրեցին, որ այս էլ կատարէ։

Թուունը գնաց յափշտակեց բերաւ։ Թագաւորի աղջիկը սարսափելի գալամների ժողովի մէջ էր, բայց ամենքից յարգամկներ ու պատիւներ ընդունեց։ Մանաւանդ պարոն աղուէսը * քաղցր լեզուով եւ * կոտրտուելով * հանգստացրեց նորան։

Այս օր որսորդը ուժ որս որսաց։ * Մտքում ասում էր, թէ ո՞վ գիտէ ինչ նոր գազան ընկերացել է։ Բայց ի՞նչ տեսաւ. իւր սիրած թագաւորի աղջկան. որքան ուրախացան երկուան էլ։

Թագաւորը բարկացած՝ մարդիկ ուղարկեց անտառ, որ իւր աղջկան գտնեն բերեն։ Աղուէսը հեռուից տեսաւ նոցա, եւ խկոյն արջին ու գայլին հրամաններ տուեց։ Սոքա գնացին բոլորին պատառ-պատառ արին, մէկին ողջ թողեցին, որ գնայ թագաւորին պատմէ տեսածը։

Թագաւորն ուղարկեց աւելի մարդիկ. աղուէսը առխճին եւ վագրին առաջ ձգեց, հրամայելով որ մէկին էլի ողջ թողնեն։

Թագաւորը ահագին զօրք ժողովեց։ Աղուէսն էլ գահի վրայ բարձրացաւ, հրամայեց գաղաններին, որ ամէն մէկը գնայ իւր աղգը բերէ։ Միւս օրը որսորդը որ եկաւ, տեսաւ որ բոլոր անտառը գաղաններով լիքն է. իւր ծառաներն առաջ եկան եւ աղուէսը հասկացրեց, թէ ի՞նչու համար են հաւաքուել։ Միւս օրը թագաւորը զօրքով եկաւ, գաղանները կոփու գնացին եւ յաղթեցին։ Իրանց տիրոջ տարան քաղաք, թագաւոր շինեցին, աղուէսը գառաւ մեծ վեղիր, միաներն էլ նազիր վեղիր։

15. ՀԱԶԱՐԱՆ * ԲԼԲՈՒԼ.

Մէկ թագաւոր եօթը տարի շինել տուեց մի եկեղեցի։ Օծեցին. թագաւորը գնաց աղօթք անելու։ Մէկ էլ այնպի

բուք բարձրացաւ, որ թագաւորը քիչ մնաց պէտք է * խեղդուէր: Տեսաւ մէկ * ճգնաւոր իւր առաջ կանգնած: «Թագաւորն ապրած կենայ, ասաց * ճգնաւորը, սիրուն եկեղեցի շինեցիր, բայց մէկ բան պակասում է»: Բուքը * խստացաւ, * ճգնաւորը աներեւոյթ եղաւ:

Թագաւորը եկեղեցին քանդել տուեց, եօթը տարի շինել տուեց, առաջինից էլ աւելի սիրուն: Օծեցին. թագաւորը գնաց ազօթք անելու: Բուքը բարձրացաւ: ճգնաւորն էլի եկաւ եւ ասաց. «Թագաւոր, ապրած կենաս, պայծառ է եկեղեցիդ, բայց մէկ բան պակասում է»:

Մէկ էլ քանդել տուեց թագաւորը: «Աշխատեցէք ուղիղ իննը տարի, ասաց. այնպէս շինեցէք, որ աշխարհքի երեսը տեսած չըլինի նմանը»: Նինեցին, օծեցին: Թագաւորը գնաց ազօթք անելու: Բուքն սկսուեցաւ, ճգնաւորն առաջեւ * տղնկուեցաւ: «Թագաւորն ապրած լինի, ասաց, * աննման է քո շինած եկեղեցին, ափսոս որ մէկ բան պակաս է»: Թագաւորը վերջապէս ճգնաւորի փողպատը բռնեց: «Մէկ ասա, տեսնեմ իմ եկեղեցու պակասութիւնն ի՞նչ է. դու երեք անգամ քանդել տուիր ինձ»: — Այս եկեղեցուն Հաղարան * ըլբուլ է պէտք, որ միայն սորան է վայել»: — ճգնաւորն աներեւոյթ եղաւ: Թագաւորը տուն եկաւ:

Նա * մոտածեց. թէ ծերացած է ինքը. ժամի համար Հաղարան * ըլբուլ է պէտք, ի՞նչպէս երթայ բերէ:

«Մենք կ'երթանք կըբերենք, ասացին նորա երեք որդիքը: Երեքը ձի հեծան, գնացին: Մէկ տեղ հասան, տեսան որ ճանապարհը երեք ճիւղ է, * շուարած կանգնեցին:

ճգնաւորը պատահեցաւ նոցա, հարցրեց. «Ո՞ւր էք հընում, * կորիչներ»: — Գնում ենք Հաղարան ըլբուլ բերելու, ըրգիտենք որ ճանապարհով գնանք:

ճգնաւորն ասաց. «Այս լայն ճանապարհով գնացողը կը դառնայ. միջին ճանապարհով գնացողը՝ կամ դառնայ կամ

յրդառնայ. ցածրի ճանապարհով գնացողը յոյմ՝ ըրկայ որ դառնայ»:

Ի՞նչի, հարցրեց փոքրը:

«Կերթաս, ասաց, մի գետ կայ, Հաղարան ըլբուլի տէրը նորան աղի է արել, չի * խմուի, դու պիտի խմես, ասես. 0Ղս, անմահութեան ջուր է: Գետը կ'անցնես, մէկ անտառ կըգայ, այն արել է չարփուշ. դու պէտք է քաղես, հոտոտես, ասես. 0Ղս, արքայութեան ծաղիկ է: Անտառը կ'անցնես, կըտեսնես մէկ կողմ գայլ կապած, միւս կողմ գառն. գայլի առաջեւ խոտ, գառի առաջեւ միս. պէտք է վերցնես միար գնես գայլը առաջեւ, խոտը գառի առաջեւ»:

Կանցնես կ'երթաս կըհասնես մի մեծ գուռ, մէկ փեղկը փակ, մէկ փեղկը բաց. փակ փեղկը պէտք է բանաս, բայց՝ փակիս: Ներս կըմննես կըտեսնես, որ Հաղարան ըլբուլի տէրը քնի է. եօթն օր քնում է, եօթն օր արթուռն է: Թէ որ ասածներս կարողացար կատարել, Հաղարան ըլբուլ կըբերես, ապա թէ չէ՝ ոչ կարող ես երթալ, ոչ կարող ես դառնայ»:

Եղբայրները ձի հեծան, մեծը լայն ճանապարհով գնաց, միջնակը միջին, փոքրը ցած ճանապարհը բռնեց գնաց: Փոքրին ետեւ ետեւ պատահեցան՝ գետ, անտառ, գայլ, գառն, դուռն, ճգնաւորի ասածը բոլորն էլ արեց. ներս մոտաւ տեսաւ որ մի ցեյրան մարալ աղջիկ է պարկած: Հաղարան ըլբուլը իւր վանդակից իջաւ նատեց աղջկայ սրտի վերայ՝ հաղար լեղուով * ձլվաց, * ըլբաց: Աղջկան քունն էր տարել. տղէն ելաւ Հաղարան ըլբուլը առաւ, աղջկայ երեսի վերայ էլի իւր պոռնկներով մի * նշան * գրեց, ետ գարձաւ իւր ճանապարհը:

Աղջիկը քնից որ զարթեցաւ, տեսաւ որ ըլբուլը ըլկայ. իմացաւ որ տարել են, գոռաց. «Դուռ, * ըլնիր»: Դուռն ասաց — Աստուած նորա հետ լինի, իմ բաց փեղկը փակեց, փակ փեղկը բացեց:

Գոռաց. «Գայլ, գառ, բռնեցէք»:

Ասացին—Աստուած նրա հետ լինի. խոտ գառիս տուաւ,
միս՝ գայլիս:

Գոռաց. «Անտառ, բռնիր»:

Ասաց—Աստուած նորա հետ լինի. դու ինձ չարփուշ
արեցիր, նա արքայութեան ծաղիկ արեց:

Գոռաց. «Քետ, դու բռնիր»:

Ասաց—Խցի՞ բռնեմ, դու ինձ արեցիր գառնազի, նա
արեց անմահութեան ջուր. թող գնայ, Աստուած նորա հետ
լինի:

Աղջիկը անմար մնաց. հեծաւ իւր ձին: Մենք թողնենք
նորան իր ձիու վերայ:

Փոքր եղբայրն եկաւ ճգնաւորի մօտ, տեսաւ եղբայրնե-
րին, որ ճանապարհից դարձել էին: Հազարան բլբուլը առան
երեք եղբայրները միատեղ շարունակեցին ճանապարհը տուն
գնալու համար: Ծարաւեցան, հասան մի հորի բերան: Փոքր
եղբօրը իջուցին, որ ջուր հանէ: Ջուրը քաշեցին, եղբօրը
թողեցին հորի մէջ: Երկու եղբայր մէկմէկու ասացին. «Նա
որ մեզ հետ լինի, մեր հօր առաջեւ մենք ինչ երեսով երե-
ւանք»: Առան Հազարան բլբուլը գնացին: Հասան տունը, հօրն
ասացին. «Մեր փոքր եղբայրը սպանուեցաւ. Հազարան բըլ-
բուլը մենք ճարեցինք, բերինք»: Հազարան բլբուլը կախեցին
ժամի մէջ, իսկի ոչ ձայն ածեց ոչ շունչ:

Աղջիկն իւր ձիով հասաւ թագաւորի մօտ, ասաց. «Այն
*կտրին ով է, որ իմ հազարան բլբուլը բերել է»: Երկու
եղբայրներն ասացին. «Մենք ենք»: Խնչ տեսաք ճանապար-
հին: «Ոչինչ ըլտեսանք»:—Դուք չեք բերողը, դուք դող էք»,
ասաց: Բռնեց * բռնատում դրեց թագաւորին էլ, երկու եղ-
բօրն էլ, ինքը տիրեց քազաքը նստեց: «Մինչեւ Հազարան
բլբուլ բերողը ըլգայ, ձեզ ազատել ըլկայ»:

Սոքա մնան այնտեղ, մենք գնանք փոքր տղին:

Գարի քաղող կնիկներ տղին հորից հանեցին: Մէկ պա-
ռաւ կին նորան հոգեզաւակ արեց: Մի քանի շաբաթ անցաւ,
ձայն ձայնի ընկաւ, հասաւ մինչեւ տղի ականջը, թէ Հազա-
րան բլբուլ բերողն եկել է, տէրն էլ ետեւկոց հասել է: Մէկ
օր տղին պառաւից հրաման առաւ, ասաց. «Երթամ քազաք,
մի նոր զարմանալի ժամ՝ են շինել, տեմնեմ»: Գնաց իրանց
տուն, տեսաւ որ ոչ հայր կայ, ոչ եղբայրներ: Հարցրեց. «Ո՞ր
են»: Ասացին—Հազարան բլբուլի տէրն էկել է, բռնատում է
դրել: Տղին գնաց բռնատումից հանեց հօրն ու եղբայրներին:
Աղջիկն ասաց. «Ես Հազարան բլբուլի տէրն եմ. դու ինձա-
նից չեմ վախենում»: Տղին ասաց.—Ես Հազարան բլբուլի բե-
րողն եմ, չեմ վախենալ:

Աղջիկը հարցրեց. «Ճանապարհի վրայ ինչ ու ինչ տե-
սար»:

Տղին պատմեց՝ գետ, անտառ, գայլ, խոտ, գուռ, ինչ
որ արել էր, ինչ որ տեսել էր: «Թէ որ այդ բաներին չեմ ս
հաւատալ, երեսիդ վերայ էլ մի նշան կայ. իմ նշանածն ես
դու»:—Հալալ ըլի քեզ, ասաց աղջիկը:

Հարօանիք կազմեցին, գնացին ժամը պսակուելու: Հազա-
րան բլբուլ * ճլվտան սկսեց. Հազար-Հազար եղանակներով
ձայն հանեց, դայլայլիկ էր արձակում, դայլայլիկ երգում:

16. ԲԻՒՐԱՊԱՏԻԿ.

Կային մէկ մարդ մէկ կնիկ: Այս մարդը շատ ժամանէր
էր: Ամենայն օր ժամ էր գնում, օրը մէկ գրօշ էր տալիս
տէրտէրին: Տէրտէրն էլ ամենայն օր նորան ասում էր «Օրհ-
նած, իհւրապատիկը քեզ մէկի տեղ հազար տայ»:

Մարգն ուրախանում էր, ինքն իրան ասում էր. «Այս
լաւ բան է. մէկ տալիս եմ» հազար պէտք է առնեմ»:

Այսպէս գնալով գնալով ինչ որ ունէր տէրտէրին տուեց,

աղքատացաւ։ Կնիկն ասաց այս մարդուն. «Վեր կաց գնան տէրտէրին, մէկ հազարը բեր, տանք հացի-մացի, մինչեւ որ մէկ էլ հազարներն էլ կամաց-կամաց տայ»։

Մարդը գնաց. «Օրհնեամ ի տէր»։—Աստուած օրհնէ։ «Տէրտէր ջան, ես քեզ տոփի, դուն ինձ հազար-հազար խոստացար. հիմի բեր մէկ հազարը տուր տանեմ, այն տանեմ, այն մէկէներն էլ՝ յետոյ կրգամ կրտսա»։

— Օրհնած, ասաց տէրտէրը, դուն ինձ տոփիր, որ Բիւրապատիկը քեզ մէկին հազար տայ։

«Բիւրապատիկը ո՞րն է»։

Մի ճանապարհ ցոյց տուեց։—Սյս երկայն ճանապարհը կըքունես, կ'երթաս. մէկ մեծ մարդ կրպատահի, որ ոսկի աթոռի վերայ նստած է, Բիւրապատիկը նա է. ասա նորան՝ ինձ տէրտէրն ուղարկեց, մէկ տուել եմ՝ հազար պէտք է տաս։

Մարդն այն երկայն ճանապարհը բռնեց գնայ։ Պատահեցաւ՝ մէկ քարանձաւ, մտաւ ներս, ի՞նչ տեսնէ. քառասուն հոգի աժդահայ գող շարուել են. սորան պատիւ են անում, տեղ են բաց անում, իրանց մէջ նստեցնում են։ Դարձան հարցրին. «Ո՞վ ես դու. այսքան ժամանակ է ահու մարդ չէր եկել այս կողմը. ո՞րտեղից ես գալիս, ո՞ւր ես գնում։

Մարդն ասաց. «Բիւրապատիկին եմ գնում» մէկ տուել եմ, հազար պէտք է առնեմ։

Գողերն ասացին—Եղբայր, այդ խելքը խելք չէ, ականջ մի գնի, արի այստեղ, տանք քեզ բռով ոսկի, դարձիր գնաքո տունը։

«Զէ, ասաց մարդը, այդ փողը հալալ չէ»։ Գողերն ասացին.՝ Որ այդպէս է, դու արդար մարդ ես, որ գնաս, Բիւրապատիկին հարցրու մեզ համար մէկէլ աշխարհքում տեղ կայ։ «Գլխիս վերայ», ասաց մարդը… գնաց։

Գնաց մէկ ծերի պատահեցաւ, որ քարի մօտ նստած էր. նա անդադար ասում էր. «Փառք քեզ Սատուած, Փառք քեզ

Աստուած»։ Քանի ասում էր՝ քարից միշտ ոսկի էր բղխում։ Տէրը հարցրեց այս մարդուն. «Եղբայր, ո՞ւր ես գնում»։ Ասաց. «Գնում եմ Բիւրապատիկին՝ մէկ տուել եմ, հազար պէտք է առնեմ»։

Տէրն ասաց. «Արի այս ոսկուց երկու ափ տամ, առ, տուն դարձիր»։

«Զէ, ասաց մարդը, այդ ոչ իմ տուածն է, ոչ իմ վաստակածն է, ինձ հալալ չէ»։

Տէրն ասաց. «Որ այդպէս է, երբ Բիւրապատիկին գնաս՝ հարցրու, թէ ոսկին Երբ պէտք է * կտրոփի այս քարից»։— Աչքիս վերայ, ասաց մարդը ու գնաց։

Գնաց ճանապարհի վերայ տեսաւ մէկ այգետէր. Նա հարցրեց. «Հողածին, ո՞ւր ես գնում»։ Մարդն ասաց. «Գնում եմ Բիւրապատիկին՝ մէկ տուել եմ, հազար առնեմ»։ Այգետէրն ասաց.՝ Կ'երթաս՝ հարցրու Բիւրապատիկին, ինչո՞ւ իմ այգու պատը որ քաշում եմ՝ կանաչ * պտուղներն ամենը չորանում են, պատը որ քանդում եմ՝ կանաչում են։ «Երեսիս վերայ», ասաց մարդն ու գնաց։

Գնաց տեսաւ, որ մէկ տէրտէրի մէջքի վերայ պատ է շարած, մէջը տընկըտընկում է։ Տէրտէրն հարցրեց. «Որդի, ո՞ւր ես գնում»։ Մարդն ասաց.՝ Գնում եմ Բիւրապատիկին՝ մէկ տուել եմ, հազար պէտք է ստանամ։

Տէրտէրն ասաց. «Գնա Բիւրապատիկին հարցրու. ես այս պատից Երբ պէտք է ազատուիմ»։—Լաւ կ'ըլի, ասաց մարդն ու գնաց։

Գնաց տեսաւ, որ մէկ մեծ մարդ ոսկի աթոռի վերայ նստած է։ Նա հարցրեց. «Ո՞ր ես գնում»։

Մարդն ասաց. «Բիւրապատիկը դո՞ւ ես»։

Ասաց.՝ Հա, ես եմ. ի՞նչ ես ուզում։

Ասաց. «Մեր տէրտէրն ինձ ուղարկեց; Ես քեզ մէկ տուել եմ, դու ինձ հազար պէտք է տաս։

Բիւրապատիկն ասաց. — Կ' երթաս * տունդ, բակիդ մէջ
* թթի ծառ կայ, նորա տակը փորիր, մի կարաս լիք ոսկի
դուրս կրգայ, վեր առ քո մէկի տեղ հազար հազարանոց:

Են մարդը ամէն * ապսպածներն էլ ասաց Բիւրապա-
տիկն. ամենի պատախանն առաւ ու դարձաւ:

Եկաւ, պատի մէջի տէրտէրին ասաց. «Երբ որ * Աստը-
ծուն մեղայ գաս, այդտեղից կ' աղասուես»: Տէրտէրն ասաց.
— Ես ի՞նչպէս մեղայ գամ Աստծուն: Խօսքը բերանից հանեց
ու մէկէցմէկ պատումատով գնաց գետնի տակ:

Մարդը գնաց այգետիրոջ հասաւ, ասաց. «Այգուդ պա-
տերը քանդիր, որ անցուդարձ անողն ուստի, այգիդ կըկա-
նաչ»: Դեռ խօսքը բերանն էր, տէրը գնաց պատերը քան-
դեց, այգին կանաչեց:

Մարդն անցաւ, գնաց ծերուկի մօտ. ասաց, «Քանի քո
բերանից Աստուած չես պակսեցնիլ, քարից ոսկին չի պակա-
սիլ»: Ծերն ասաց. «Մի՛թէ մարդ իւր բերանից Աստուած կը
պակսեցնէ. վառք Աստուածոյ: Ասաց չ' ասաց, քարի մէկէւ
երեսիցն էլ ոսկի * բղխեց' առաջնից էլ շատ:

Մարդն եկաւ գողերի քարանձաւի մէջ. գողերին ասաց.
«Թէ որ ձեր գողութիւնը թողնէք, մէկէւ աշխարհ. քում ձեզ
տեղ կայ»: Գողերը թող տուեցին իրանց քարափի փոսը, գնա-
ցին իրանց մեղքը լացին, փրկուեցան:

Վերջապէս մարդն եկաւ իրանց տուն. * կնկան կանչեց,
ասաց. «Կնիկ, բահ ու փէտատ բեր»: Առան բահն ու փէ-
տատը, * թթի ծառի տակ փորեցին, մի կարաս լիք ոսկի
գտան: Իրիկունը * մթնեցաւ, կարասը թողեցին առաւօտուն
համել: Գիշերը հարեւաններն իմացան, եկան որ կարասը գո-
ղանան տանեն. տեսան որ դեղին հող է մէջը, վեր առան
կարասը շուռ տուեցին այն մարդու այգու վերայ. կարասը
կոտրուեցաւ, հողը ցրուեցաւ: Առաւօտեան զարթեցան, ի՞նչ
տեսան. այգու չորս կողմը ոսկի է * փոռուել: Երիկը գոռաց.

«Քա կնիկ, ցախսաւելը բեր. բոլոր այգին ոսկի է բուսել»:
Աւելեցին կօրն կօրն ոսկիք, մէկի աեղ հազար չ' է անթիւ
հազար առան, * հարստացան, Աստծուն փառք տուին:

17. ՄՕՐ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԸ ՈՐԴՈՒԽՆ.

Դմ աննման որդի:

Ես քանի տարի է մեղ մոռայել ես: Քեզ մնալով՝ մեր
աչքը ջուր * կտրուեցաւ. մեր հոգին հալուեցաւ քո ճամբուդ
վրայ: Մեզ * մոքից հանեցիր, մեղ սպանեցիր:

Դու չես գիտի, իմ հոգու կտոր, որ քեզ կարօտել ենք.
քո սիրով մենք մաշուել ենք, սիրուն որդի, երբ պիտի գաս:
Ուզրաց ես գաս ու մեր գերեզմանը տեսնես, դուն էլ մեր
երեսին կարօտ մնաս, մաշուե՞ս ու * մղկուաս:

Իմ թափած արտասոնկները մոքիդ չէ գալիս, որ գի-
շեր ցերեկ քեզ համար գերի էի ու մեռած: Կ' ուզէի որ դու
* զուարթ լինիս, իմ վարդ, ծլես ծաղկիս. հա, էս էր իմ
սրտի բանը, արեւիդ մեռնիմ, որդի:

Ես կրնստէի քո օրօրոցին, քեզ մեղրից անուշ կաթ կը
տայի, որ դու ուտէիր, քաղցր քուն քաշէիր, զօրանայիր,
որ իմ լացը * սրբէիր: Իմ անմահական որդի, ես քեզ էս
օրօրը կ' ասէի:

Քեզ դնեմ ոսկի օրօրոց,
Վրէդ քաշեմ * մարգարտէ ծածկոց,
Շուտով * քնես, բարով զարթնես,
Իմ վարդ որդի, քեզ մատաղ ես:
Քեզ շատ օր օր, տար, տար ասեմ,
Բացուես, իմ վարդ, քեզ մեռնեմ,
Օրօր, իմ վարդ, ու նամիկ,
Գաղուած է շատ քո մէրիկ:

Տեսար բալես, տեսար, ինչ անուշ խաղեր եմ ասել, որ
դու անուշ քնէիր. քեզ կաթ ու մեղր եմ տուել, որ ուտէիր
զօրանայիր, իմ ցափա գեղ ու գարման լինէիր: Քո մէկ ժըպ-
տալը ինձ սիրտ էր տալիս, քո մէկ ծիծաղը՝ ինձ կեանք էր
տալիս: Ախ, էստունք ինչի՞ մոռացար: Ներիք է, որդի, ա-
րի, դուն զարիբութեան, մենք կարօտութեան մէջ խորովում
ենք. դու ուրիշին աչք մի՛ տար, ուրիշի աչքը մեզ լոյս չի
տալ: Քո նազելի տեսին կարօտ՝

քո պառաս, մեր

Շուշան:

* * *

Նոր տարու երկուշաբքի

Վահ:

* *

II

Հարկաւոր նախապատրաստութիւններ անելուց
յետոյ

ԿՈՐԴԱԼՈՒ ՀՍՏՈՒԱԾՆԵՐ

1. ՖԼՆՑՂՈՒԿ.

Նա վիլուեց ցորեն կըտուրի վերայ: Յորենը
Ճընճղուկի կերակուր է: Ճընճղուկը կերաւ ցո-
րեն: Նորան սպանեցին քարով: Նորան մորթե-
ցին, եփեցին: Ճընճղուկ—ծիտ: Ծիտն ի՞նչ է,
թէ իւր եղն ի՞նչ ըլի: Բայց շատ մեծ բազմու-
թիւն կերակրուեցաւ այդ կերակրով: Աչա այս-
պիսի ճաշին կ'ասեն, թէ Ճընճղուկը ուզտ շի-
նեցին:

ՈՒման ու գըղիրն էլ հասան ճաշին: ՈՒմի
գըլիսին լոյս է թափել, ո՞վ է տեսել—գըղիրը:
Գըղը բերանին պարկ է կախ արած, որով-

Հետեւ ամեն տեղից մի բան շահվում է, պարկն է դնում, տուն է տանում։ Ուսի ձեռին գաւազան կայ։

Մենք ասում ենք՝ քեօխվայ, Վասպուրականի և Տարօնի կողմն ասում են՝ ուս։ Վանեցին՝ Վասպուրականցի է, Մշեցին՝ Տարօնեցի է։ Աղթամարը Վասպուրականումն է, Սուրբ Կարպետը Տարօնումն է։ Այս ժողովուրդը ուրախ զուարթ է։

Նոքա ասում են՝ օրը կ'երթայ, աւուր շառը չ'երթայ։ Մենք ասում ենք՝ Բանն արա, զուարթացիր։ Մենք ի՞նչ ոսկէ պողեր ունինք, որ մշակների վերայ ծիծաղում ենք։

2. ԱՔԱՂԱՂ.

Կուկուկու աքաղաղ. Կարմիր կատար թագու պսակ. Կարմիր կանաչ աբրէշում, աբրէշում չէ՝ մետաքս է։ Զիր ու չամիչ հարս ու փեսին։ Եփած կորկոտ՝ գող սե կատուին։ Կատուն կերաւ, մայրը սրգաց։

Կուկուկու՝ իմացէք, աքաղաղի աղաղակ։ Անձրեւ օրը հաւերին ջուր տուող շատ կըլի։ Հին հաւերին քշայ-քշայ, նոր հաւերին ջուջու-

ջու։ Մեր տանը կուտ է ուտում, հարեանի տանը ձու է ածում։

Հանելուկ, հանմանելուկ,
Ծէրը ծաղիկ, տակն ամելուկ։

Էն զատը ի՞նչ զատոց է, գլխի թագը սրղոց է, գիշերուան մեռելյարոյց է։

— Քրիստոս յարեաւ ի մեռելոց։

3. ԱՐԵԳԱԿ.

Պըստիկ սատանէն քնից զարթնեց, տեսաւ մութն է, լոյս չկայ։ Ասաց. «Ի՞նչ ծոյլ զատ ես, արեգակ, քանի քընես, ինչի չես զարթնում»։ — Արեգակը չըլսեց։ «Մուկը, այն պըստիկ մօւկը, փախցրեց ոսկէ բլիթը. գէ, արեգակ. չե՞ս իմանում»։ — Արեգակը ելի չըլսեց։

«Կատուն ետեից վազեց, կատուից չեշտ չես պրծնիլ. նա գոմշի ոտը կոտրեց, նորա ճանկից դու ի՞նչպէս պէտք է խլես ոսկէ բլիթը»։ — Արեգակը այս էլ չըլսեց։

«Քայլի գլխին աւետարան կարդացին, լոող չեղաւ. արեգակ, այսքան էլ քոն կ'ըլի՞»։ Երբ որ արեգակը դուրս եկաւ, մանուկն ասաց. «Ես

իմն արեցի, քեզ դուրս հանեցի. Հիմու դուն
գնա եղբօրդ գտիր, դարդը ի՞նչ է:

Արեգակը լուսաւորում է մեծ արարած աշ-
խարհը: Ի՞նչպէս իմանայ, թէ ճանձի կտոր
սատանան ի՞նչ է փրնթփրնթում:

Արեւ, արեւ, եկ, եկ,
Զիզի քարին վէր եկ,
Մեր ոչխարին մըտիկ արա,
Որ գայլը գայ՝ իմաց արա:

4. ԱՌԱԽՕՏ.

Ես ծոյլ, դու աշխատաւոր. Ես քընեմ, դու
վեր կաց: Լաւ օրն առաւօտուանից, լաւ տարին
գարունքուանից: Վախար վախտին, թէ չէ
ժամանակն անց է կենում: Խօսքը վաղ վեր կե-
նալը չէ, Աստրծու յաջողեն է:

Լուսաւորչի վառած կանթեղը դեռ չէ հան-
գել, նա երկընքումն է Մասիսի գլխին: Առա-
ւոտեան լոյսը առաջ Մասիսի գլուխն է լուսա-
ւորում, յետոյ այն մարդկանց, որոնք այդ տես-
նում են: Քրիստոսին շատերը չըտեսան, բայց
հաւատացին: Մեր Արգար թագաւորը նրան
չէր տեսել, բայց ամենից առաջ նա հաւատաց:

Արգարի հաւատը, Լուսաւորչի լոյսը, մեր
շնորհը:

Ով ալարի, ոչ դալարի:

Առաւօտ, կէս օր, երեկոյ, գիշեր: Ցերեկ ու
գիշեր: Արեգակ—լուսին ու աստղեր:

Բարի լոյս քեզ առոտեհան,
Չեռիս ոնիմ զազլէ չուան,
Թէ ջրկապեմ խուրձը քրան,
Գոտիկս ոնիմ հետը կըցան:

5. ՔՈՅՑԻ ԵՒ ԵՂԲԱՅՐ.

Եղբայրն ասաց՝ քոյր չունիմ: քոյրն ասաց՝
իմ եղբօր արև: Քոյրը տան մէջ շատ գործ
ունի. Նա պէտք է տունը զարդարէ, մաքրէ,
աւլէ, նա պէտք է կերակուր եփէ, լուացք ա-
նէ, նա պէտք է կար անէ, հիւանդին խնամէ:
Եղբայրն անհոգ դուրաը խաղում է, նա ամե-
նիցն աւելի սիրելի է. քոյրը նորան «Ճան» է
ասում, նորան մնատաղ է դառնում:

Եղբայր, դու մեծացիր, ես քեզ մատաղ. Երբ
մեծանաս, դու ինձ տէր տիրական: Մայր, ես
լաւ եմ թէ քոյրս: Որդի, որ մատըս որ կտրեմ՝
կըցաւի. դու իմ շէնքն ես, նա իմ շնորհը:

Երկուշաբթի՝ հաց կըժխեմ,
Երեքշաբթի՝ լոշ կըծալեմ,
Չորեքշաբթի՝ լուսացք կ'անեմ,
Հինգշշաբթի՝ կարկատան կ'անեմ,
Ուրբաթ օր՝ զուգսը կ'անեմ,
Նաբաթ օր՝ ժամ կ'երթամ,
Կիրակի՝ խորած խեխտած,
Ո՞վ է բանում, որ ես բանեմ:

6. ՈՒԽՈՎ ԿԱՏՈՒ.

Աշխարհքում ամենքը թշնամիք ունին:
Գնացին մոծակի մօտ գանգատեցան: Մոծակն
է դատաւոր:

Նունը գանգատեցաւ բաղից: «Քեզ համար
ճար չ'ունիմ, ասաց մոծակը: Բըզի գլխին բը-
ռընցքով տալ չըլնիլ»:—Հապա ինձ ինչ կը-
հրամայես, հարցրեց բաղը դատաւորին. արե-
գակն ինձ այրում է: «Վայ, բաղն ու արեի
զօրութիւն չ'իմացող, զարմացած կանչեց մո-
ծակը. բա կ'ուզես, որ արեգակ չ'ըլի ու սառչե՞ս:
Էնդուր էլ ասած է, թէ սառած օձը առաջ
տաքացնողին կըկըծէ»:

Եկաւ արեգակը գանգատեց ամպից, ամ-
պը անձրևից, անձրևը խոտից: Մոծակըն
այս անգամ շատ շփոթուեցաւ և ասաց.

«Արեգակ, ամպ ու անձրև, դուք երկնքի բա-
ներ էք, գնացէք ձեր ցաւը Աստղծուն յայտ-
նեցէք. ես իմ պըստիկ տեղովըս ուզում եմ ո-
տըս մեկնել իմ եօրդանի չափով. երկինքն այն-
քան չեռու է ինձանից, որ չեմ էլ տեսնում»:
Անձարացած արեգակն էլի եփ տուեց ծովը՝ շի-
նեց ամպ, ամպն էլքամուեցաւ, դառաւ անձրև:

Հիմի եկան խոտը, գառն ու գայլը և ի-
րանց ցաւն ասացին: Մոծակն աւելի նեղն
ընկաւ և չէր իմանում, թէ ինչ անի: Մարդուն
տեսաւ և ասաց. «Ասում են, թէ դու ամենից
խելօք արարածն ես աշխարհքում. դէ՛հ, եթէ
շնորհը ունիս, այս երեքին մազէ կամուրջով
այնպէս մէկմէկ անցկացրու, որ միմեանց
չ'ուտեն: Սոցա էլ այսպէս գրլխից չեռացրուց:

Եկաւ շունը պառաւից գանգատեց: Մո-
ծակը շատ չըլըսեց և ասաց, թէ կամ հաւա-
տարմութիւնդ է պակսել կամ գող ես: Նուն
էլ ձայնը կտրեց ու ամօթից իւր պոչը կախ
գցեց և չեռացաւ:

Եկաւ պառաւը. մոծակն իմացաւ, թէ նո-
րա քանդողն ով է, ասաց. «Գիտեմ, գիտեմ,
մարիկ, թէ ո՞վ է խտակում հացերդ և մուր-
տառում կարասդ: Մուկը պըստիկ ու չըստիկ

է. մէկին որ սպանես, տեղը հազար է բուռնում: Դու գնա էլի քո ականատը սարքէ, ես կատուի չետ խորհուրդ կ'անեմ; յոյսդ Աստծու վերայ դիր, կարելի է մի ճար դանենք»: Պառաւին էլ այսպէս ցանեց:

Այսքան երևելի գործեր կատարելուց յետոյ՝ մոծակն ուզում էր փոքր ինչ հանգստանալ. մէկ էլ տեսաւ, մուկը վազելով գալիս էր:

«Մուկ, մուկ, քեզ շատ են գովում, կանգնի՞ր, մի ասա, դու ես ուժո՞վ, թէ ես»:—Հալա կատուից ինձ ազատիր, նա իմ ետևից է ընկել, յետոյ կրիօսենք, ասաց մուկն ու փախաւ:

Կատուն էլ կատաղած հասաւ, բայց ուշ: «Մոծակ, իմ ոտի փշերը տեսնո՞ւմ ես, ասաց կատուն, ո՞ւր թախ կացրիր մկան»: Մոծակը տեսաւ, որ այս գաղանի համար համով դատաստան չըկայ, վեր կացաւ իւր թախտից և բրդրզալով պտուտ եկաւ: «Հալա մի խօսենք, փըշիկ, յետոյ փուշերդ սրէ. հայրդ լաւ է, թէ մայրդ»: Կատուն ասաց. նաօ՛, նաօ՛—կատուն ասաց. ոչ նա, ոչ նա: «Ինչո՞ւ, փրշիկ, աչքերդ չես հեռացնում ինձանից. կ'ուզես ճանկել ինձ»: Կատուն ասաց. մեառն, մեառ—կատուն ասաց. այո՛, այո՛:

Մոծակը մէկ էլ բրդրզաց ու մտաւ կատուի ականջը. խայթեց, խայթեց, այնքան խայթեց, մինչև որ կատուի հոգին հանեց:

Մկներն էլ իրանց հարսանիքն սկսեցին, չալաւանդ խաղացին: Վայ խեղճ պառաւին:

7. ԱԽՍԴ ՄԸԿՆԻԿ.

Լաչաք ծածկողը աւագ է. խաթունները լաչաք ունին: Աւագ մըկնիկ, խաթուն մըկնիկ: Խաթունը գնաց էրիկ ուզելու: «Աստուած յաջողի», ասացին ամենքը, «բախտաւոր լինիս», ասացին: Բախտը բերաւ, լաւ մարդ գըտաւ: «Ենորհաւոր, աչքըդ լոյս», ասացին: Կինը տան տիկին էր, մարդը տանուտէր էր: Մարդը դառում էր, կինը կառավարում էր:

Յանկարծ խաթունը—Ճժտիկ-վժտիկ. արեգակը սևացաւ, ամենքը սրգուորեցան: Մէկն եղաւ կատար կրտրիկ-մոխրաչափիկ, մէկը—թևաթափիկ, մէկը—ճրդակրտոր, մէկը—գըլորմըլոր, մէկը—բըլորմըլոր, մէկը—կըթոց շըրջիկ, հովիկը նախիրն անտէր թողեց, մաքին մխիթարելու գնաց:

Էլ ո՞վ մընաց, որ չըմըղկրտաց: Մաքին մըկըկաց, թաղեց մըկան, մեր աւագ մըկան:

Են հանաքին ի՞նչ ասեմ, որ կէսը զորթ-
չէ: Մուկը ծակը չէր մըտնում, ցախ աւեն էլ
պոչիցը կապեցին: Մուկը մեռաւ—աշխարհը
սրգաց, այ բան:

Կատուի խրոխրոախ մկան հոգեհան-
գիստն է:

8. ՄԱՐԴ ՈՒ ԿԸՆԿՍՆ ՍԵՐԸ.

Ուր սէր կայ, այնտեղ խոռվութիւն և
կոիւ չըկայ: Այս ինչ սէր է. մէկն ուզում է
կօմբալ դառնալ, ծեծել. միւսն ուզում է զանակ
դառնալ, կըտրել: Մէկը միւսին ուզում է սպա-
նել. մահն ընկերովի հարսանիք է: Մէկը մա-
ծուն է շինում, միւսն ուտում է. մէկ ձեռով
ծափ տալ չի ըլիլ:

Երիկը դառաւ բըռան կատու, ձութ-ձութ-
խաղող, կարմիր գինի, թեժ թունդ բացախ: Կնիկը
դառաւ կաղնի կօմբալ, սուր-սուր դա-
նակ, սարխօշ Մայրօ:

Բըռան կատու—խոշոր ծեր կատու: Ճութ-
ճութ խաղող—այգի: Կարմիր գինի—կարաս:
Թեժ թունդ բացախ—շիրախանայ: Կաղնի
կօմբալ—անտառ: Սուր-սուր դանակ—դարբնի
շինած: Մայրօ—Մարիամ:

Երբ որ էրիկը քացխեցաւ, կինը ձաքեցաւ,
մունջ կացաւ:

9. ԾԵԾՈՒԱԾ ԳԱՌՆԻԿ.

Գառնիկ, մէկ էլ պատմիր գըլխիդ եկածը.
պատմի՛ր, ոչինչ մի՛ պակսեցնիլ:

«Ես գնացի ծառի տակը արածելու: Տե-
սայ լաւ կանաչ խոտ ուտելու: Դէմը կանգ-
նեց մի պառաւ կին: Ճիպօտ ունէր նա իւր
«ձեռքին: Փիս կընիկը ինձ ծեծեց, ծեծեց որ
«չեռանամ: Ոտիկները կոտըրտեց: Խիստ ցա-
ւեցան ոտիկներս, ես չըկարողացայ լացըս պա-
հէլ: Խիստ ծեծ կերայ, ես լաց եղայ»:

Ոչխարը գլուխը շարժեց, նեղացաւ: Մըտ-
քումն ասաց. «Նա մեր միսն է ուտում, մեր
եղն ու պանիրն է վայելում, մեր կաթն է խը-
մում, մեր բուրդն է գըզում... Ով գիտէ, գու-
ցէ վաղը ինձ էլ մորթէ: Այսքան բարութիւն
որ անում եմ, իմ գառնիկիս ինչի՞ չէ խնայում»:
Ելի պառաւն եկաւ սորան էլ, իւր գառնիկին
էլ ճիպօտով քըշեց:

«Ե՞ս, ասաց մայրը, գընանք, որդի, մարդիկ
ոչ արդարութիւն գիտեն, ոչ երախտագիտու-
թիւն ունին»: Գընացին, չեռացան:

10. ԱՂՈՒԵՍԻ ԹԻՔԵՆ.

Խեղճ աղուէսը վաղուց մի թիքայ բերան չէր դըրել: Ծոմ պահող ձըգնաւորի պէս ման էր գալիս. ամենքի մեղքն էր գալիս: Մէկ էլ տեսնես, նա կանգնեց մի տեղ, դունչը սրեց: «Էս մէկ, ասաց, երկու, երեք, և փընթփընթաց մինչև տասն ու մէկ: Յետոյ մըտքումն ասաց. «Ի՞նչ չաղեր են... վիզը, սիրուն վիզը»: Բայց չըմօտեցաւ. աղուէսն ու չըմօտենայ, այ զարմանալի բան:

Պառաւը գնաց բուրդ բերեց գըզելու: Գըզ, գըզ, գըզ արեց ու տեսաւ, որ աղբի տակից ինչ որ քըչփորում է: Կանչեց. «Հափսա»: Հափսի ձայնով այնպէս լուսթիւն տիրեց աղը ըըսխանումը, որ ձանձն անցկենար՝ կրլսուէր:

Գըզ, գըզ, գըզ... պառաւն իւր բանին էր: Մէկ էլ տեսաւ, հաւը ինչ որ շփոթ հանեց: Պառաւն ասաց. Երանի, ի՞նչ է փորացաւդ, որ կըրկըռում ես»: Հաւն իւր կըրկըռոցը չըլադարեցրեց: Պառաւը ոտքի կանգնեց. «Մէկ, երկու, երեք... տաս. էլի մէկ, երկու, երեք... տաս». մէկ խօսքով, քանի համարեց, տասն էր համարում: «Տղէ ըք, հարայ

տուեց պառաւը, գայլը մէկ վառիկ է փախցրել, գնացէք, շուտ»:

Խեղճ գայլի անունն է կոտրած, աղուէսը աշխարհք քանդեց:

Աղուէսին հարցըրին. գայլին իսօ չես տեսել: «Ի՞նչպէս չէ, ասաց, դընչին մէկ վառիկ ունէր, ձամփի այն երեսով գնաց»: Այսպէս իւր գըլից հեռացրեց նոցա, ինքը մարսեց և այս խաղերն ասաց.

Ա.

Բ.

Մէկ, երկու, տասն ու մէկ.
Տասն ու մէկը ով ասաց.
Տասն ու մէկը ես ասի,
Թէ չես հաւտայ համրէ տես:

Աստուած ողորմի այն պառաւի
(Հոգում,
Որ կընըստէր չորեք ձամփին,
Լիդը գըզէր, լիդը մանէր,
Լիդը խճուճը խտակէր:

11. ՄՈՒԹ.

Մոնթը շատ երազ էր տեսնում. երազում տեսնում էր արքայութիւն: Մէկ օր էլ գընաց, ասաց, թէ արքայութեան դուռը բացէք, մըտնեմ: Հրեշտակը հարցըրեց, թէ ի՞նչ լաւութիւն ես արել: «Լաւութիւն շատ եմ արել, ասաց. պաս ու ծոմ պահել եմ, աղքատին ողորմութիւն եմ տուել, եկեղեցի եմ շինել»: Նատ ու բախացան հրեշտակները:

Ասացին, արի փորձենք քեզ: Անցկացիր այս մազէ կամուրջը, մի վարդ կըտրիր բեր մեզ. քանի որ հարայ տան՝ տարան, տարան, դու ականչ չըղընես և յետ մըտիկ չըտաս: «Տէրը ձեզ բարի, ասաց մոնթն ուրախացած, սորանից էլ հեշտ բան կըլի»:

Դընաց, վարդ կըտրեց, բայց ի՞նչ հրաշալի պարտէզ տեսաւ. սիրտն ուզեց, որ մնայ այնտեղ:

Նա յետ եկաւ, յետևից՝ տարան, տարան, գոռացին: Նատ պընդեց սիրտը, բայց զուր, մէկ էլ յետ նայեց, և այնժամանակ արեգակը խաւարեցաւ:

«Ե՛ս, ասացին նորան, քեզ համար արքայութիւն չըկայ»:—Ի՞նչպէս թէ չըկայ, սիրտը կոտրած պատասխանեց մոնթը. հանեց ջիրից սաղմոս, աւետարան, ժամագիրք, և ասաց:—Տեսէք, կարդալով մաշել եմ: «Սըրտումը պէտք է դրել էիր, ասացին, չէ թէ ջիրումը»:

Մոնթը զարթեցաւ, տեսաւ, որ իւր տեսածն երազ էր: Այն օրը շուտարած միշտ կըրկնում էր. «Սըրտումն ի՞նչպէս պահեմ այս գըրքերը. մէկ չէ, երկու չէ, երեք է»: Մին էլ մի ձայն լսեց սար ու ձորից. «Ուզո՞ն ասաց

քեանդըրբազութիւն գիտեմ. նորան պատասխանեցին՝ քո քեանդըրբազութիւնը մազէ կարմնջի վրէն կ'երևայ»:

Մոնթի դարդերը յետ ասելու համար՝ ամառուայ օրեր պէտք է լինին և ձըմեռուայ գիշերներ:—Սուտ «մեղին», սուտ «թողութիւն»: Ուշ ըլի, նուշ ըլի:

Մտայ ի տեղը ի գերեզման,
Անխօսիլ, անխոստովանիլ,
Անմահ մեռել եմ,
Անգերեզման թաղուել եմ.
Անթառամ պըսակի,
Լուսեղէն դըրախտի
Արժանանամ:

12. Անխելք ՄԱՐԴ.

Այսպիսի անխելք մարդուն կ'ասեն. «Խօսքը հարստութիւնը չէ, խօսքը կառավարեն է»: Նա միայն ուտում էր և ծոյլ էր: Երևի միշտ ասում էր. «Ուտեմ տիտեմ. նունում նանամ»: Հարստութիւնն ասաց. «Պոաս խօմ չեմ, մէկ էլ դուրս գամ»: Հարստութիւնը՝ անխելքի գանձանակն է: Ով տուն չէ շինել, տըները բըսնովի գիտէ:

Տուտուց, տուտուց,

Կարմիր կըտուց.

Համ պասուց

Համ ուտրսուց:

Եյսուչետև կը կարդանք պատմութիւնը.

«Նըստեց» սւնի երկու ձայնաւոր՝ ը և է, բայց միշտ գրում
են մէկ է ձայնաւորով: Եյսպէս բառեր շատ կան:

Ա.

Բ.

Գ.

Նըստեց. Նստեց. * Նստեց: *)

Նըստեց, գւլխին, խըրտնել, գընայ, գըտնես, փընտուց բարձըր.
Նստեց, գլխին, խրտնել գ-նայ, գտնես, փնտ-ռեց, բարձր.

Ճըռած, բըռնեց, գանձանակըս, նըմուշ, պտղով լըցուկ, նըշմարեց.
Ճռած, բունեց, գանձանակս, ն-մուշ, պտղով լ-ցուկ, նշմարեց.

Բըհամ, հարըստութիւն, տըռւեց, ապըսպրած, աղջըկան, ջըրի.
Բ-համ, հա-րս տու-թիւն, տ-ուեց, ա-պսպ-րած, աղջ-կան, ջ-րի.

* Նստեց, * գլխին, * խրտնել, * գնայ, * գտնես, * փնտ-
ռեց, * բարձր, * ճռած, * բոնեց, * գանձանակս, * նմուշ,
* պտղով, * լցուկ, * նշմարեց, * բչամ, * հարստութիւն,
* տուեց, * ապըսպրած, * աղջկան, * ջրի:

*) Եյսուչետև առանձին ընթերցանա-նեռն հատուածներ էլ չի
առաջարկվում: այլ մանուկները պէտք է կարդան նոյնինքն ուսուց-
նեանէրը ամբողջութեամբ: Բայց որովհետև կիսավանկերին (զեղ-
չուած չ) գեռ սովոր չեն, ուստի այստեղ միքանի վարժութիւններ
է բերուած այդ նպատակով: Աստղանիշ բառերը թէ այստեղ և թէ
պատմութեան մէջ կիսավանկեր ունին: — Առաջարկուած վարժու-
թիւններից Ա-ը պարօւնակումէ ամբողջ բառեր կիսավանկ ը-երով:
Բ-ը՝ նշյն բառերը վանկերի բաժանած, բայց առանց ը-երի, Գ-ը՝
նշյն բառերն անբաժան և առանց ը-երի:

13. ՆԱՀԱՊԵՏԵՆՅԱ ԱՂՋԻԿ.

Համբերութիւնը կեանք է: Աստուած հա-
լալին կըտայ: Ամէն բանի վերջն է գովելի:
Մարդ՝ մարդու քահանայ: մարդ՝ մարդու սա-
տանայ: Ամալ օրը գայլը կ'ուրախանայ: Ոչով չամի,
թէ իր ճրագը մինչեւ առաւօտ լոյս կըտայ:

Թըլի, կընկայ, աննըման, աղջըկայ, փըրիւ բացրեց, լըցրեց
տ-ղի, կն-կայ, ան-ն-ման, աղ-ջ-կայ, փր-փ-րաց-րեց, լց-րեց.
Լըուացուեցաւ, պըսակի, տըռւեց, հօրս, խլիել, ձըլների.
Լուաց-ուեցաւ, պս-ա-կի, տ-ուեց հօ-րս, խ-փել ձշ-նե-րի.
Խըմես, գըտած, պըսակ, վըրէն, մօրս, հանգըտանալ փախցնել-
խ-մես, գ-տած, պ-սակ, վ-րէն, մօ-րս, հան-գս-տա-նալ, փախ-ց-նել-
սըրբել, հովըուին, կըտըրտեց, գըռներ, դըրան, կըշտին, մըշակներ-
որ-բել, հովուին, կ-տր-տեց, գուներ, դ-րան, կշ-տին, մշ-շակ-ներ-

բըռնէ, փընտուելու, թըռցրեցին.

բունէ, փնտ-ռե-լու, թու-ցրե-ցին:

* Տղի. * կնկայ, * աննման, * աղջկայ, փրիրացրեց,
* լցրեց, * լուացուեցաւ, * պսակի, * տուեց, * հօրս, * խլիել,
* ձզների, * խմես, * գտած, * պսակ, * վրէն, * մօրս * հանգ-
տանալ, * փախցնել, * սըրբել, * հովուին, * կտրտեց, * դոներ,
* դրան, * կշտին, * մշակներ, * բոնէ, * փնտուելու, * թուցրեցին:

14. ԳԱԶԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ.

Ամէն բանին տէր կ'ուզէ, ամեն բանը
թագով պէտք է պըսակուի: Թագաւորն էլ
թագի լայաղ պըտի: Խնչ կըցանես, այն կը-

Հընձես: Նները իրար հետ կըովում են, գայլի
դէմը միանում են: Աերը սիրով կըլինի, քաշ-
քաշելով բան չի դառնալ:

Տըուեցին, տնից, բըռնեց, շընորհք, մըքում ըսքանչելի.
տուեցին, տնից, բունեց, շնորհք, մոքում սքանչելի.

Հանգըստանում խըրատ, սըրտով վըրան, Աստշուն, քաղցըր:
Հանգստանում խըրատ, սըրտով վըրան, Աստշուն, քաղցըր:
Կոտըրտուելով, հանգըստացրեց.
Կոտրտուելով, հանգստացրեց.

* Տուեցին, * տնից, * բունեց, * շնորհք, * մոքում,
* սքանչելի, * հանգըստանում, * խըրատ, * սըրտով, * վըրան,
* Աստշուն, * քաղցըր, կոտըրտուելով, * հանգըստացրեց:

15. ՀԱԶԱՐԱՆ ԲԼԻՌԻԼ.

Եօթը եկեղեցի էլ որ շինես, դեռ էլի
վարձքիդ չես համնիլ: Աստուած շատ ու քըչին
չի նայում, սըրտի միջին է նայում: Աիրտը
ճըրագ չէ, որ լոյս տայ: Աստըծուն է յայտնի:
Աշխարհը կտրիչինն է, վարձքը արժանա-
ւորինն է: Բլբուլը իւր դարդը կուլայ, ազուալը
դար դար կ'անէ:

Բլբուլ խեղդուէր, ճըգնաւոր, խըստացաւ, ըսկըսուեցաւ.
Բլբուլ խեղդուէր, ճըգնաւոր, խստացաւ, սկըսուեցաւ.
տնկուեցաւ, աննըման, մըտածեց, շըուարած, կըտրիչ խըմուի-
տնկուեցաւ, աննըման, մըտածեց, շըուարած, կըտրիչ խմուի.
Ճըլբուլը, բլբուլը, նըշան, բըռնատուն.
Ճըլբուլը, բլբուլը, նշան, բունատուն:

* Բլբուլ, * խեղդուէր, * ճըգնաւոր, * խստացաւ, * սկը-
սուեցաւ, * տնկուեցաւ, * աննըման, մըտածեց, * շըուարած,
* կըտրիչ, * խմուի, * ճըլբուլ, * բլբուլ, * նշան, * բունատուն:

16. ԲԻՒՐԱՊԱՏԻԿ.

Բիւր—տասը հազար, բիւրապատիկ—հա-
զարապատիկից էլ աւելի: Աստուած, ամենայն
բան քո օրհնութեամբ է լինում, օրհնիր և
ինձ: Աստուած կանչողն անյոյս չի մնալ: Աս-
տուած հալալին կըտայ: Գողին էլ «թողու-
թիւն» կայ, սուտ «մեղին» թողութիւն չըկայ:
Անէծքն անիծողին կըդառնայ: Վարդապետին
ասին՝ որդիդ մեռնի. ասաց՝ ես որդի չ'ունիմ,
համա խօսքը խօսք չէ:

Բլշնում: Կըտըրուի, թըթի, ապըսպրածները, կընկան, մըթնեցաւ.
բլ-խում: կ-տը-ուի, թ-թի, ապս-պրածնե-րը, կն կան, մը-նե-ցաւ.

Փըուել հարըստացան.
Փու-ուել հա-րս-տա-ցան:

* Բղխում, * կտրուի, * թթի, * ապսպրածները, * կնկան,
* մթնեցաւ, * փուուել, * հարստացան:

17. ՄՕՐ ԳՐԱԾ ՆԱՄՍԿԸ ՈՐԴՈՒՆ.

Մէկ կոդ կորեկի շարելը հեշտ է, քան
մէկ որդու մեծացնելը: Որդին որ բըռնումը

ձուաձեղ շինէ, մօր պարտքիցը չի կարող դուրս
գալ: Գրած նամակը պատասխան կ'ուզէ: Որ-
դու համբաւը մօր սիրտը կամ կըսեացնէ կամ
կըկարմըրեցնէ:

Կըտըրուեցաւ, մըղկըտաս, զըռւարթ, ուրբէիր, մարգւրտէ, քննես.
կ-տր-ուե-ցաւ, մղ-կ-տաս, զ-ուարթ, որ-բէ-իր, մար-գր-տէ, ք նես.

*կտրուեցաւ, *մղկտաս, *զուարթ, *որբէիր, *մարգրտէ, *քննես:

ամ շաման և ազգան սովոր հայութ ունենալ ունենալ
ուրբէր ու մղկտաս զըռւարթ ուրբէիր մարգւրտէ քննես
այսի ամ հայութ ու ազգան սովոր հայութ ունենալ
մարգրտէ քննես ամ հայութ ուրբէիր մարգւրտէ
ամ հայութ ու ազգան սովոր հայութ ունենալ
այս զառի զարգութ ունենալ.

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ծ Թ Ք

1) ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԵԲ ՈՒՄԻՇ ԶԱՅՆԵՐԻ ՆՄԱՆՈՒԹԻՒՆ

Կոռունի կրկոռցին կ'ասեն. «Գայ, գայ Ճամբորդը»,

(Կառակ)

«Տիտ, ծիտ, ծտաբուն,
Երբոր մժնի, գնաս տուն, թռռ...»

(Ճնճշուկ)

«Միաւ, կատու».

— Ո՞ւմ կատուն ես.

«Աղարեկի».

— Ի՞նչ ես ուզում.

«Սեր ու կարագ».

— Ո՞ւմ համար.

«Իմ որդիկերանց համար»,

(Կառակ)

«Տիծեռնակ, ծիծեռնակ»

Քո հայրն ի՞նչ, քո մայրն ի՞նչ,

Բաշխուլ հաւի աշերն ի՞նչ»

(Ծիչեռնակ)

«Քեռին մեռել է, քեռին մեռել է,
մեռել է, մեռել է»:
Ե՞րբ, Ե՞րբ, Ե՞րբ.
«Մը...կը...կէլ օրը, մըկըկէլ օրը».
—Ղորթ, Ղորթ, Ղորթ:

(Պատմ.):

Այ տէրտէր, ջան տէրտէր,
Տես ուտում, չես խմում.
Քո փորը քանի՞ գրգռոց:

(Թահէն.):

Ալբաօն խիէ, խէպօն խաղայ,
Ակէ տիւկլէ տընաղ է,
Էծիկ մէծիկ բզէղ է,
Օֆ, տիւֆ, նաղարայ,
Հար, Բարա, Հարիսայ,
Քաթիպի կոճակ,
Պինա ֆօլօճակ,
Ճըթ, պըթ.

(Նալուայ.):

Վերին տախտակ՝ թըլիկ թըլիկ,
Յածրի տախտակ՝ վըլիկ վըլիկ,
Մէջն է տւտուց տուտլուտուց,
Տըկի բերան՝ վըզ վըզ:

(Թարանայ.):

2) ՕՐԱՅՈՅՑ ՏՈՆԱՅՈՅՑ ԵՒ ՕԴԵՐԵՒՈՅՑԹՆԵՐ.

Երկուշաբթի՝ շբլդօրա,
Երեքշաբթի՝ տաշտաբօրա,
Չորեքշաբթի՝ հաց կըթիսեմ,
Հինգշաբթի՝ բանիս կ'երթամ:

Ուրբաթ՝ թուրքի կիրակի.
Շաբաթ՝ ջշուդի կիրակի,
Կիրակի ու մըր կիրակի.
Տօ, անիրաւ, ի՞նչը բան անեմ:

Յանէրին էշն ախոռումը կիմանայ, թէ օրն երկարացել է:
Խաւը որ ջուրը ի՞նչնէ, օրերը կըտաքանան:

Մարտի իննին:

Լագլագը բնին:

Այնպէս կորաւ, ինչպէս Մարտալորդի ագռաւը:
Ժամը Զատիկն արեգակով պիտի դուրս գայ, Ծանրեան՝ մթնով:

Զէն է գալիս փաթիլ փաթիլ
Թուրքը ասաց՝ բանս վատ է,
Պառաւն ասաց՝ մոզիս կորաւ,
Գայլն ասաց՝ փորիս դեղ է:

Անձրէ, անձրէ, ցած արի,
Բոււցուր ցորեն ու գարի,
Բոււցուր ծալիկ, կանաչնոտ,
Ալէ փոշի, մաքրէ' օդ:

Անձրէ, անձրէ, ցած արի,
Գալք ամենուս բարի:

Ագռաւի ձայնը թէ որ Աստուած լսէր, Վարդալուսին ձիւն կըդար:

Կարմիր կանաչ գօտիկ:

(Միաժամ.):

Հանք մը ունիմ հանայ-հանայ,
Առաջնարը մըսըրիսանայ,
Աաթնաղբիւրէն ջուր կըխմէ,
Արիւնծովէն ձայն կըհանէ:

(Ուրանա.):

Եկեղեցի մի կայ, շատ մեծ է,
Առանց սիւնի ու գերանի կանգնած է,
Հազարաւոր կանթեղներ առանց չուանի
Աախուած են, և վառ են առանց ձէթի:

(Երին + Սարդուլը.):

Առաջնորդ նոր շնորհաւոր,
Ես մեղաւոր, դու թագաւոր,
Նստած բանիս բարաքաթ,
Կանգնած ջանիս՝ հարաքաթ:

Նուրին, նուրին եկել է,
Ազբայ հուրին եկել է,
Շիլայ շապիք հագել է,
Կարմիր գօտիկ կապել է,
Եղ բերէք, մէջքը քսենք,
Զուր բերէք դլիսին ածենք,
Մեր նուրինի փայը տուէք,
Ուտենք խմենք, քէփ անենք,
(Առաջնորդ և աղաքարէ,
Կ'ասուի երաշուն):

Ճըռ, ճըռ, ճչանակ.
Աստուծոյ գուռը բանանք,
Դուրսը ժամ ասենք,
Ներս գանք, պատարագ անենք,
Կամ
Կարկաչայ, կարինչակայ,
Սև օձին՝ սև Սանօսին,
Նէնէներ,
Խունի առէք, մոմ առէք,
Տասներկու պատարագ արէք,
Իմ կարմիր հաւկիթու էլ
Դուրս բերէք:
(Կըբերգուի Զատկից մէտեն
օր սուսդ, ճչանակը ձեռին):

Ալէլուիս, ալէլուիս,
Հրէս եկաւ մի ձիաւոր,
Լախտը ձեռին քաջ ձիաւոր,
Աջու ձեռին աւետարան,
Զախու ձեռին սաղմոսարան,
Աջով գրէր, ձախով ջնջէր,
Ձախով գրէր, աջով ջնջէր,
Բարեկամ, երեխայիդ անունն ի՞նչ է: (Այս անուն):
Զեր (այս անուն) թախտին նստի,
Դմիլիկ ձեռքը ջէրը տանի,
Հինգ աբասին ջէրից հանի,
Սուրբ Ուրգսին մատաղ անի,
(Առաջնորդ Սարգսի անուն):

Քա՛, քա՛, տարայ տարայ,
Վեր ելայ բերդի վերայ,
Կանչեցի, տէր-Զաքարա,
Խունկ ու մոմ հազիր արա,
Առաւտուն պաշտում արա,
Մէկն էն է պուճախ,
Մէկն էս է պուճախ,
Մեր քաւորենց
Մեղրի պուճախ,
(Բարեկանե-նի հաճլորդի երժ):

3) ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒԽԻՆԵՐ.

Առանգ, զունգ, էտի կաց,
Ատամ: գուն վկայ կաց,
Իփ որ հարցնիմ, հագիր կաց,
(Եղուանիք աղօնտ):

Ալալիսս, Գալալիսս,
Աղա Ստեփան, Ստեփանիսս,
Կալիլ իմ կապիլ իմ:
Ութը մատով, երկու բթով,
Սուրբ Սարգսի ձիուն ձարով,
Աստուծածնի քաղցր կաթով... չի՞շ:
(Կաբէնի հետեւ աղօնտ):

Մէ կտիր՝ էդնէն ծով կայ,
Ծովի մէջը կալ կայ,
Կալի մէջը գէղ կայ,
Դէղի մէջը խուրձ կայ,
Խուրձի մէջը հատիկ կայ,
Հատիկ կուտանք, կու հանինք:
(Աչե հարեւեն աղօնտ):

Գայլը կապիմ երկու բթով՝
Աստուածածնայ քաղցր կաթով՝
Առւրբ Սարգսայ ձիուն ձարով՝
Տէր Մովսէսի գաւազանով՝
Լուսաւորչայ սուրբ հաւատով՝
Լեղուն կապուի, ակոան թափուի,
Եկած ճամբան գայ մոլորի,
Իմ տիրոջս խաչը տեսնի,
Դիւանքի պէս թող սասանի:

(Գայլէ աղջիւ)



ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅԻ ՀՐԱՏԱ-
ՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1.	Տէր-Ղեռնդեան՝ Մայրենի Լեզու. ա. տ. տասներեք տիպ. 35	4	
2.	, , Մայրենի Լեզու. բ. տ. ութեր. տիպ. 40	4	
3.	, , Մայրենի Լեզու. գ. տ. հինգեր. տիպ. 45	4	
4.	, Մայրենի Լեզուի քերակ. տարերքը, մ. ա.	30	4
5.	, Մայրենի Լեզուի քերակ. տարերքը, մ. բ.	50	4
6.	Բացասարութիւն Մ. Լեզուի ա. տարուայ	60	4
7.	Հայորդի՝ Սրբազան պատմութ. Հին Կտակարանի	50	4
8.	, Սրբազան պատմութ. Կոր Կտակարանի	50	4
9.	Աղայեանց Ուսումն Մայրենի Լեզուի. ա. տարի	25	4
10.	, Ուսումն Մայրենի Լեզուի. բ. և գ. տարի	45	4
11.	Անահիտ. Հին զբոյց	50	4
12.	Տէր Ստեփանեան՝ Սկզբունք քր. Հաւատոյ	50	4
13.	Ա. Մանդինեան՝ Ընտանեկան Աշխարհ	25	4
14.	, Դիցազնական Աշխարհ	30	4
15.	, Նահապ. և Հայր. Աշխարհ	65	4
16.	, Բացատրութիւն Ընտ. Աշխարհի	75	4
17.	, Հէնչէլի թուար. Խնդիրներ. մ. ա.	40	4
18.	, Հէնչէլի թուար. Խնդիրներ. մ. բ.	50	4
19.	, Համառօտ Մանկավարժութիւն 1 բ.	50	4
20.	Կոստանեան՝ Ծաղկաքաղ, ըրջան Ա.	25	4
21.	, Ծաղկաքաղ, ըրջան Բ.	60	4
22.	, Ծաղկաքաղ, ըրջան Գ. գրաբար	40	4
23.	, Նախաշաւիլ	25	4
42.	Եղիշէ ըստ Անձեացեաց օրինակի. 1 ա. և	80	4
25.	Սիմոնեան՝ Աշխարհագրութիւն, մասն բնական.	60	4
26.	, , մասն քաղաքական	60	4
27.	Վարձելեան՝ Դասագիրք թուարանութեան	70	4
28.	Ա. Պ. և Մ. Պ. Ժողովածու թուարան. Խնդ. մ. ա.	40	4
29.	, Սցյ մ. բ. կոտորակներ	45	4
30.	Այվազեան՝ Նախարթեանք, մ. ա.	40	4
31.	Տէր - Դաւթեան՝ Պուրք. սլու	50	4
32.	Ագնիևъ. „Первый шагъ“, учебникъ русск. языка. 40	4	
33.	Захаровъ. Сборникъ примѣровъ для пись. исчислениѧ 20	4	
34.	Տէր Սարգսեան՝ Հայկական գեղագրութեան օրինակներ	25	4
45.	, Վայելչագրութեան դասաւանդութեան եղանակը 20	4	
36.	, Տողած տետրակներ № 1, 2, 3, 4	5	4

Գումարով կանխիկ գնողները նշանաւոր զեջումն ունին.

2018
4005



